

# ԼԻՅՍ

ԿՐԹԵԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԵՃՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱԹԵՐԹ  
ԳՆԵՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԵՈՒՋՆՈՐՊՈՒԹԵԱՆ



**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՒՄՐԻԻ «ԵՕԹ ՎԷՐՔ»Ը

Աբել Քհնյ. Մանուկեան

ՊԷՏՔԸ

Եղիշէ Արք. Դուրեան

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Բարգէն Թօփճեան

ԴՐԱՄԻՆ ՄԻԻՍ ԵՐԵՍԸ

Օշական Արք. Չօլոյեան

ԽԱԶԸ

Ծահան Ռ. Պէրպէրեան

ԵՂԻԾԷ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Թորգոմ Փօսթաճեան

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԵՒ  
ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Գառնիկ քհնյ. Գոյունեան

ՀՆՈՒԹԵԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Թամար Տասնապետեան

ՔԵԶ ՏԵԱՌՆԴ ԶԱՆԶՆ ԵՂԻՑՈՒՔ.

ԳԱՆԶԵՐ ԶՈՒՆԵՄ,

ԻՄ ԿՈՂՔԻՆ ԵՍ

Յակոբ Արք. Գլճճեան

# ԳԻՒՄՐԻԻ «ԵՕԹՎԵՐՔ»Ը

(ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ)

«Անկանխիժ առաջի քոյ, սուրբ աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, եւ աղաչեա զմիածին որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց»:

(Ժամագիրք)

«Եւ արդ ո՞ր բան բաղդատելով՝ զանհամեմատ քո մեծութիւնդ լիցի կարող գերառնչակել, արարչին մայր, անհասին ծնող, անբաւին գրկարան, ամենակալին յանձանձիչ, փառազարդողին զգեցուցիչ, վերօրհնելոյն գրգիչ»:

(Ս. Գր. Նարեկացի)

Այսօր, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին կը տօնախմբէ Ս. Մարիամ Աստուածածնի կեանքը յիշատակող տօներէն ամենէն յատկանշական դրուագը, որ կը կոչուի Վերափոխում. այսինքն՝ Ս. Աստուածածնի երկինք համբառնալը, երկրաւորէ յաւիտենական կեանքի փոխադրուիլը:

Ի դէպ, «երկինք» փոխադրուիլն այստեղ վայր մը չի խորհրդանշեր, որքան կը վկայէ Աստուծոյ մօտ կամ փրկուած ըլլալու փաստի մասին:

Ան, որ Նախախնամութեան տնօրինումով պիտի դառնար «Տաճար Հոգևոյն Սրբոյ» եւ «Սափոր ոսկի», գիտնէն Աստուած իր կուսութեանը մէջ ընդունիլ կարենալու համար, սուրբ եւ անմեղ պէտք է ըլլար իր ծնունդէն մինչեւ իր ննջումը: Այս իմաստով, Եկեղեցին չի խօսիր Մարիամ Աստուածածնի «մահուան», որքան «ննջման» մասին, քանզի ան Աստուծոյ յատուկ միջատութեամբ, ազամական մեղքէ զերծ մնացած ըլլալով, մեղքի, ապա ուրեմն՝ մահուան դառնութիւնը պիտի չճաշակէր: Ան երկրաւոր կեանքին համար ընդամենը պիտի ննջէր, հուսկ՝ իր ծիծաղախիտ աչքերը բանալու համար յաւիտենական կապոյտին:

Աստուածամօր պարագային, Վերափոխումը կ'ընդգրկէ իր հոգեւոր եւ մարմնաւոր ամբողջութիւնը, իբրեւ տրամաբանական հետեւանք աստուծապարգեւ իր մասնաւոր շնորհուածութեան եւ անմեղութեան:

Հայաստանեայց Եկեղեցին, նկատի ունենալով Ս. Կոյսին մարդկային, հոգեւոր եւ բարոյական բացառիկ արժէքները, ծիսական իր տօնակարգին մէջ հաստատած է Ս. Աստուածածնին նուիրուած այլ տօներ եւս, միշտ անդրադառնալու համար աստուածային շնորհներով առլցուն կատարեալ կնոջ, որպէսզի Աստուածամօր բարոյական բարձր մտատիպարով դաստիարակէ իր հաւատացեալները:

Վերափոխումէն բացի, Աստուածամօր նուիրուած տօները հետեւեալներն են.

ա. Մարիամի ծնունդը Յովակիմէն ու Աննայէն,

բ. Մարիամի տաճարին ընծայումը,

- դ. Հրեշտակի կողմէ Աւետումի տօնը,
- դ. Աստուածամօր կրած գօտիի գիւտին տօնը, ինչպէս նաեւ՝
- ե. Աստուածամօր տուփին գիւտը, որուն մէջ գտնուած է անոր անձնական լաջակը՝ գլխաշորը:

Ահաւասիկ, այսօրուան Վերափոխման տաղաւարին հետ, հինգ տօներ եւս, որոնք բոլորն ալ կու գան ապացուցանելու, թէ որքան տիրական դէմք մըն է Աստուածամայրը եկեղեցւոյ կեանքին, եւ նոյնքան կարեւոր ներկայութիւն մը՝ Աստուծոյ Փրկագործութեան խորհուրդին մէջ:

Արդարեւ, այս փոքրիկ ներածութենէն ետք, այսօրուան իմ ծրագիրս, այնքան Աստուածամօր երկիրք վերափոխուելու դրուագի մասին խօսիլը չէ, որքան նիւթ ունենալ իր նշանաւոր եօթ վէրքերու պատմութիւնը, խորհրդածութիւններս կեդրոնացնելով Աստուածամօր մէկ նշանաւոր սրբապատկերին վրայ, որ «Եօթ վէրք» կը կոչուի:

Հայերէն լեզուին մէջ «վէրք» եւ «ցաւ» հասկացութիւնները հոմանիշ բառեր են. այնպէս որ «վէրք» բացատրութիւնը «ցաւ»ի իմաստով պէտք է ըմբռնել՝ ինչպէս, օրինակ, մեր ժողովուրդը կը սիրէ ըսել. «վէրքերս շա՛տ են», որ նոյնպէս կրնայ «ցաւերս կամ դարդերս շատ են» նշանակել, եւն.:

Աստուածամօր սրբապատկերը, որուն մասին վերը ականարկեցի, կը գտնուի Հայաստանի Գիւմրի քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ աջակողմեան մատուռին մէջ: Ան շատ աւելի հին է քան մուգ քարերով 1837ին կառուցուած եկեղեցին, որ կը գտնուի Գիւմրիի գլխաւոր հրապարակին վրայ, 7 Դեկտեմբեր 1988ի երկրաշարժէն կործանած Ս. Փրկիչ եկեղեցւոյ հանդիպակաց կողմը:

Սրբապատկերը յատուկ նուիրականութիւն մը շնորհած է զինք իր խնկաբոյր պատերուն մէջ գրկող եկեղեցիին, որուն համար ալ վերջինս օծուած է Մարիամ Աստուածածնի սրբակրօն անունով:

Աստուածամայրը, որուն ծունկերուն վրայ հանգած է Յիսուսի գլխահակ ու անշնչացած մարմինը, նկարին կեդրոնական դիրքը կը գրաւէ: Անոր աջ եւ ձախ կողմերը կարմրաւուն թեւերով երկու օժանդակ հրեշտակներ կեցած են, որոնց պիչ նայուածքը կատարուած ահաւոր դէպքին անիմանալի ու անըմբռնելի մեծութիւնը կը հաղորդէ: Ծաճանչ մը կը փայլի Աստուածամօր լուրթ կապոյտ ու սուկեծոպ քօղով ծածկուած գլխուն շուրջ: Տխուր երկինք մը ուրուագծող ամպերու մէջէն սերովբէներու եւ քերովբէներու թեւածող հոյլ մը՝ հայեացքն ամբողջապէս երկինքէն երկիր, մահացած Աստուածորդւոյն եւ իր մօր վրայ սեւեռած է. ամէնքը ահեղ ողբերգութիւնը կը գոյժեն:

Սրբանկարը ամենեւին չունի կլիկեան դպրոցի մեծերուն՝ Թորոս Ռոսլինի կամ Սարգիս Պիծակի մը նկարչական արուեստի թռչնքը. ընդհակառակը միամիտ արուեստ եւ համապարփակ պարզութիւն մը շեշտուած է հոն. ու կարծէք, ճիշդ այդ անսեթեւեթ ոճն է որ երբեմն առաւել եւս կը խօսի մարդոց ջերմեռանդ սրտերուն:

Որքա՛ն թախիժ եւ տխրութիւն կայ Աստուածամօր դէմքին վրայ. իսկա-

կան ցաւատանջ մօր մը կերպարը, որուն ցաւն ու տխրութիւնը սահմանափակուած չի մնար իր իսկ անձին կամ միայն մօր մը իր խաչեցեալ Որդւոյն հետ ունեցած յարաբերութեան մէջ, այլ, արդարեւ, ան կ'առնչուի ընդհանրապէս համամարդկային ցաւին ու տառապանքին, տուայտանքին ու տանջանքին հետ:

Այսուհանդերձ, որքան ալ սրբանկարին բուն բովանդակութիւնը կու գայ ցաւատանջ մօր մը կերպարը ուրուագծել հաւատացեալի աչքերուն, միւս կողմէն, սակայն, նկարիչ-արուեստագէտ, դժբախտաբար, անձանօթ հեղինակը, տառապանքին մէջ կը բացայայտէ կրօնական խոր ճշմարտութիւն մը, յաւիտենական խաղաղութիւն մը, հոգեւոր անասելի անդորրութիւն մը, եւ Աստուածամօր նայուածքին մէջ՝ անհունը յոյսին ու զօրութիւնը յաղթանակող կեանքին:

Յոյսը աւի՛չն է կեանքին: Կրօնքին երեք հիմնական առաքինութիւնները՝ Հաւատք, Յոյս եւ Սէր, սերտօրէն առնչուած են իրարու, եւ կարելի չէ մին միւսէն անջատել: Բազմաթիւ գիւմրեցի հաւատացեալներ, որոնք ամէն օր ազգային աւանդոյթներով հարուստ իրենց քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ այդ նուիրական մատուռը կը փութան, իրենց սրտաբուխ աղօթքին, ուխտին, մոմավառութեան, ջերմեռանդ փափաքներուն եւ անձկայրեաց իղձերուն հետ, իրենց առօրեայ հեւքի ու կեանքի դաժան կոհակներէն յուզուած հէք հոգիին մխիթարութիւնը կը գտնեն ցաւատանջ Աստուածամօր խաղաղ ու յուսաժպիտ նայուածքին մէջ:

Հետաքրքրական է, որ գիւմրեցիք, Ս. Աստուածածնին զուգահեռ, գուցէ եւ շատ աւելի՝ «Եօթ վէրք» անունով կը կոչեն իրենց մուգ, բայց օրհնական եկեղեցին, վասնզի Աստուածամայրը, որ ներկայացուած է վերոյիշեալ սրբապատկերին վրայ, իր սրտին մէջ խոցուած եօթը սուրբը կը կրէ, խորհրդանշական եօթ վէրքեր, որոնք Աստուածածինը ստացած է իր որդւոյն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի փրկագործ կեանքի ընթացքին:

Ներհայեցողաբար առաջնորդուինք այդ եօթ կարեւոր հանգրուաններով:

Առաջին վերք՝ Մարգարէացումը

Խորհրդաւոր պայմաններու մէջ ծնած է իր որդին: Կատարուածը՝ իրողութիւն մըն է մարդկային մտքի սահմաններէն գերազանցապէս վեր: Ս. Կոյսէն ծնածը՝ մանուկ Յիսուսն է, մարդու եւ Աստուծոյ Որդին, մարդու Փրկիչը եւ ինքը՝ Աստուած ճշմարիտ: Դէպքը, այս պարագային անշո՛ւշտ հրաշքը, որքան ալ անըմբռնելի ըլլար նոյնիսկ Մարիամ Աստուածածնին համար, միեւնոյն է, ան, ինչպէս ամէն մայր, երջանիկ է իր նորածին մանկիկով, եւ դեռ քառասուն օրական, ըստ հրէից սովորութեան, ան տաճար կը տանի իր նորածինը՝ ընծայելու համար Աստուծոյ: Ծիշդ հոս է որ Մարիամի համար ծանր մարգարէացում մը կը կատարուի Սիմէօն ծերունիի կողմէ:

«Այս մանուկը Իսրայելի ժողովուրդէն շատերու անկումին եւ շատերու փրկութեան պատճառ պիտի ըլլայ: Անիկա նաեւ հակառակութեան նշան պիտի ըլլայ եւ շատերու սիրտերուն խորհուրդները պիտի յայտնէ: Գալով քեզի՛, [Մարիամ], քու ալ սիրտէդ սուր մը պիտի անցնի» (Ղուկ. Բ, 34-35):

Այո՛, Յիսուսի անձին եւ Փրկիչ լինելու իրողութեան վրայ շատ տարակարծութիւններ պիտի ըլլան: Ձկնորսութենէ եւ քանի մը այլ պաշտօններէ Քրիստոսի աշակերտելու կոչուած համեստ մարդիկ եւ փխրուն կիներու փոքրիկ հոյլ մը միայն իրեն պիտի հաւատայ: Ոմանք անտարբեր պիտի մնան, մինչդեռ ուրիշներ պիտի ատեն զինք՝ մինչեւ Գողգոթա, մինչեւ խաչելութիւն: Միեւնոյն է, Մարիամ պիտի դառնայ մայրը բոլոր հաւատացեալներու, անոնց, որոնք ի սէր Քրիստոսի յանձնառու եղան հալածանքի, տառապանքի ու մարտիրոսական մահուան:

Երկրորդ վերջ՝ Հայրեմագրկութիւնը

Աստուածամօր եօթ ցաւերու երկրորդ խորհուրդը՝ դէպի Եգիպտոս փախուստն է (Մատ. Բ, 13-14): Հերովդէս կ'ուզէ սպաննել տալ մանուկ Յիսուսը: Սակայն, Տիրոջ հրեշտակը կանխաւ կը զգուշացնէ Ս. Ընտանիքը անյապաղ հեռանալու Բեթղեհէմէն, կեանքի ապահովութիւն փնտռելու համար Եգիպտոսի սահմաններուն մէջ: Հերովդէս, որ իր հիւանդագին կասկածամտութեան եւ չարութեան մէջ հակուած էր անմարդկայնութեան յոռեգոյն ձեւերուն դիմելու, կը հրամայէ կոտորել տալ Բեթղեհէմի եւ շրջակայից մէջ ապրող մինչեւ երկու տարիքը լրացնող բոլոր մանուկները:

Որքան ալ մեզի անբացատրելի, այո՛, նոյնիսկ անարդար թուի հրեշտակին արարքը, որ միայն մանուկ Յիսուսը կը փութայ փրկել, մինչ սեւ ճակատագրին կը թողու Բեթղեհէմի մանուկներուն անմեղ մնացորդացը, այսուամենայնիւ, Հին Ուխտին տուած հաւաստիացումին ուղղութեամբ, պէտք է ճշմարտանար Երեմիայի մարգարէացումը, թէ՛ «Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ, ողբ, հեծեծանք եւ լացուկոծ դառնագին. Ռաքէլ իր զաւակներուն համար կու լար եւ մխիթարուիլ չէր ուզեր, քանի այլեւս անոնք չկային» (Եր 31.15:2.23):

Կրօնքի ընկալման մէջ յաճախ տրամաբանականը չէ հիմնական ազդակը, այլ հաւատքը: Ըմբռնելէ աւելի՛ հաւատալ ու համակ վստահիլ է պէտք հոգեւոր ճշմարտութիւններու, որոնց համագումարը տուեալ կրօնքին խորհուրդը կը կազմէ: Կրօնքին մէջէն վերցուր խորհուրդը, իսկոյն ան կը դադրի կրօնք ըլլալէ ու կը դառնայ ընդամէնը գիտութիւն մը Աստուծոյ մասին: Կրօնք մը, որ խորհրդագուրկ է, չի՛ կրնար նաեւ աղօթք ունենալ, երկխօսութիւնը հոն կը վերածուի ապարդիւն մենախօսութեան: «Որհնուրդ խորին անհաս եւ անսկիզբ»ը, որմէ կը գոյաւորուի ու կ'իմաստաւորուի ամէն շնչաւոր եւ անշունչ գոյ, գերազանցապէս կը հանդիսանայ կրօնքին էութիւնը, որուն հանդէպ պէտք է հաւատալ, սիրել եւ յուսալ «ամբողջ սրտով, ամբողջ հոգիով եւ ամբողջ մտքով» (Մատ. ԻԳ, 37):

Ս. Ընտանիքը պանդուխտ է: Անոր ապագան անորոշ է Եգիպտոսի օտա-

րութեան մէջ: Կեանքի ծանր հանգրուան մը վիճակուած է անոր – թէկուզ ոչ երկարատեւ ժամանակահատուածի մը համար – դառնալու հայրենագուրկ, նոյնանալու համար այն բիւրաւոր մարդոց դառն ճակատագրին հետ, որոնք զանազան դրդապատճառներով ենթարկուած են անցեալին, ու որքա՞ն մեծ չափերով նաեւ ներկայ ժամանակներու մէջ պանդխտութեան խօլ յորձանքներուն կը դատապարտուին, քաղաքական կամ տնտեսական ապաստարան փնտռելով բարգաւաճ երկիրներու մարդաշատ քաղաքներու ժխորոտ մայթերուն վրայ:

Պանդխտութեան կրակոտ շապիկը որքան յաճախ հագնելու բռնադատուած եղած են հայ ժողովուրդի թշուառ զաւակները՝ մնալով հեռու հայրենի բնաշխարհէն, ծննդավայրէն ու հարազատներու սիրասուն շրջանակէն: Օտարութեան եւ պանդխտութեան նուիրուած մեր երգերը՝ «Կուունկ»ը, «Միժեռնակ»ը, «Պանդխտի ողբ»ը եւ բազում ուրիշներ, կը հանդիսանան այս կարօտաբաղձ հոգեբանութեան ամենախորունկ եւ յուզական դրսեւորումները:

Ահաւասիկ, նաեւ այս առնչութեամբ, Աստուածամայրը անձնապէս ճաշակելով պանդխտութեան դառնութիւնը, դարձած է միաժամանակ բոլոր հաւատացեալ պանդուխտներուն մայրը: Բոլոր այն քրիստոնեաները, որոնք ականաւոր պանդխտութեան եւ հայրենագրկութեան ճամբան բռնած են, Աստուածամօր բարեխօսութեանը դիմելով վերագտած են իրենց հոգեւոր եւ մնայուն հայրենիքը:

#### Երրորդ վերջ՝ Կորուստը

Ս. Ընտանիքին Եգիպտոսի մէջ կեցութեան շրջանը երկար տեւած ըլլալու չէ: Սոյնը իր արտայայտութիւնը կը գտնէ վերադառնալու մասին Յովսէփին տրուած հրեշտակի յանձնարարութեան մէջ. «Ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ վերադարձիւ Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մեռան» (Մատ. Բ. 20–21): Արդարեւ, Յիսուս տակաւին մանուկ մըն էր, երբ Յովսէփ եւ Մարիամ Իսրայէլ վերադարձան Հերովդէսի մահուրէն անմիջապէս հտք:

Աստուածորդին պէտք չէ որ երկար շրջագայէր օտար երկինքներու տակ: Հայրենագրկութեան կամ խորհրդանշականօրէն «Դրախտ կորուսեալ»ին պէտք է փոխարինէր մարդկութեան հոգեւոր հայրենիքին մէջ Փրկչի ներկայութեան բացայայտումը, որ Ղուկաս Աւետարանիչ կու գայ ամբողջացնել միջադէպով մը՝ Յիսուսի կորսուելու եւ, ի վերջոյ, Երուսաղէմի տաճարին մէջ յայտնուելու փաստով: Ահաւասիկ, պատանի Յիսուսի կորսուելու այս դրուագը (Ղուկ. Բ, 41–52) կը հանդիսանայ բովանդակութիւնը Աստուածամօր երրորդ ցաւին:

Երուսաղէմ կը ներկայանայ ազգի մը հոգեւոր-մշակութային բարձրագոյն սեւեռակէտը: Այս քաղաքը Յիսուսի ուխտագնացութեան նպատակն է դեռ շատ պատանի տարիքին. քաղաք՝ ուրկէ Տիրոջ Աւետարանը աշխարհաբարոզ պիտի տարածուի համայն մարդկութեան:

Ըստ Հրէական օրէնքին (Ելից ԻԳ, 14–17), հարկ էր որ իւրաքանչիւր այր

մարդ տարի՛ն երեք անգամ ուխտի երթար դէպի Երուսաղէմի տաճարը: Յիսուս թեւակոխած էր տասներկու տարիքը: Հրեաներու քով պատանի մը այս տարիքին կը սկսէր պատրաստուիլ յաջորդ տարուան, տասներեք տարեկանին, որ կրօնական չափահասութեան տարիքն էր, երբ ան իրաւասու կը դառնար մաս կազմելու հրեայ համայնքի կրօնական կեանքին:

Ուխտագնացութեան ճանապարհին, ուխտաւորներու ահագին ժխորին մէջ Յիսուս յանկարծ կ'անհետանայ: Յովսէփ եւ Մարիամ հոգեկան խուճապի կը մատնուին՝ կանգնած ըլլալով իրենց պատանին կորսնցուցած ըլլալու իրողութեան առջեւ: Ինչպիսի՞ մղձաւանջ: Տարակոյսի ծանր զգացում մը համակած է Աստուածամօր սիրտը: Ինչպէ՞ս գտնել պատանին, որ խորքին մէջ անօգնական է. իցի՛ւ թէ ան ունենար Ֆիզիքական ոյժը փորձանքներու դէմ ինքզինք պաշտպանելու: Բիւրաւոր ուխտաւորներու ամբոխին մէջ նուազ չէ նաեւ գողերու եւ ստահակներու թիւը, որ դարանակալած իր տկար որսը կը փնտռէ:

Երուսաղէմի ուխտի ճամբան երկար է, բայց այս առթիւ կարճ է Յիսուսի համբերութիւնը, որ կը մղէ գինք շուտափոյթ հասնելու Աստուծոյ տաճարը՝ հոգեւոր-բարոյական մարդուն գերագոյն ուխտավայրը, հոն յայտարարելու համար՝ «Հօրս տան մէջ կը գտնուիմ» (Ղուկ. Բ, 49):

Այսուհետեւ, Աստուած «Տապանակ Ուխտի»ին մէջ փակուած, աներեւոյթ խորհուրդ մը չէ, այլ Ան Յիսուսի անձին մէջ ճշմարտապէս մարմնացած եւ մարդացած իրականութիւն է, որ եկած է իր մնայուն ու անընդմիջելի ներկայութիւնը, միաժամանակ՝ իր փրկարար եւ կենսատու առաքելութիւնը հաստատելու ժամանակի ու տարածքի, աշխարհի ու պատմութեան, մարդկային ընկերութեան մէջ, ինչպէս նաեւ անհատ մարդոց միջեւ: Որդին Աստուծոյ եկած է յաւիտենապէս թագաւորելու իր հաւատացեալներու սիրտերուն մէջ:

Ժամերն ու վայկեանները յաւիտենութիւններ կը թուին Աստուածամօր խանդակաթ սիրոյն առջեւ, որ իր կորսնցուցածը՝ որդին կը փնտռէ: Տիեզերքի մը պէս անհուն է ուրախութիւնը եւ արեւներուն պէս ջերմ են մօր մը գեղուն զգացումները, երբ սէրն իր ամբողջ պատասխանը կը գտնէ որդիին մէջ, որ փրկուած է: Պատանի Յիսուս, կանգնած տաճարին մէջ, կ'ուսուցանէ օրէնքի ուսուցիչներուն:

Յաւատանջ Աստուածամօր կերպարը կու գայ դրոշմուիլ որդեկորոյս բուրբ մայրերու սրտերուն վրայ, հոն սպիացած կը մնայ սքանչելի Տիրամօր երրորդ ցաւին խորհուրդը, քանզի անոր ալ չխնայուեցաւ կրելու այն դժուարակիր խաչը, որ կեանքի դժեմ պատահարներ կը վիճակեն շատերու: Ծանր տուայտանքը, որ իր ամենաբարձր ինքնագերազանցումի կորուստին առթիւ մօր մը սիրտը սուր ցաւերով կը ճմլէ, որքան ալ ըլլայ անձկագին ու վշտակոծ, ի վերջոյ ամբքելի կը դառնայ այդ թշուառ մայրերուն մէջ տառապող Աստուածամօր յուսադրիչ եւ քաղցրահայեաց նայուածքին ներքոյ:

Շար. 1

Արէլ Քհնյ. Մանուկեան

## ՊԷՏՔԸ

Կարելի է շատ շփոթ գաղափար մը կազմել այն իրերուն վրայ, որոնց պէտք ունի մարդ, սակայն պէտք ըստածն ինքնին շատ որոշ բան մ'է մեր փորձառութեան մօտ: Ատոր շուրջ կը դառնայ մեր կեանքի բոլոր գործունէ-  
ութիւնը, եւ գոհացում տալ պէտքերուն՝ միակ ողջմտութիւնն է ապրելու սահմանուած ընկերութեան մը համար:

Պէտքերը կը զանազանուին սակայն՝ կը նուազին կամ կ'աւելնան, երբեմն գիրար կը վանեն ժամանակի պահանջումներուն համեմատ. անոնց այդ յեղյեղուկ հանգամանքը կրնայ զմեզ շատ անգամներ խոտորեցնել, մանա-  
ւանդ եթէ բնական չըլլան անոնք, կամ չբղիւխն բուն իսկ մարդուն էութենէն:

Այս կեանքին մէջ սովորաբար պէտքերն այլանդակ երեւոյթներ ալ կ'աւանդեն, այսինքն պէտք նկատուած սնտոիքներ՝ որոնց տրամադրութեան տակ կը դնենք երբեմն մեր բոլոր ոյժերը՝ փոխանակ զմեզ տանելու լաւագոյն զարգացումի կամ կանոնաւոր աճումի՝ աւելի սպառում կը սպառնան մեր ան-  
ձերուն՝ մեր կեանքին:

Շատ անգամ ալ այնպիսի պէտքեր՝ որ մարդուն նախնական կեանքին հետ ծրարուած կուգան՝ կը ծայրատուին՝ կ'ընդոտնուին կիրքերու գոհացու-  
մով եւ անձնահաճ մտածութիւններով, եւ չզգար մարդ թէ ի՛նչ սպանութիւն մը կը գործէ իր անձին վրայ:

Հարկ է ուրեմն ճանչցնել ժողովուրդին իր էական պէտքերը՝ թէ՛ բարոյական ըլլան եւ թէ՛ բնախօսական. հա՛րկ է զգացնել իրեն թէ՛ առողջ ընտրու-  
թեան մը շնորհիւ կրնայ ինքը հետեւական մնալ իր վիճակին ու ճակատագրին հանդէպ. հա՛րկ է սեւեռել տալ իր ուշն իր ամէն մէկ կարողութեանց եւ գոյու-  
թեան ամէն մէկ պայմաններուն վրայ. մէկ խօսքով՝ ցուցնել իրեն թէ՛ «միայն հացով չէ՛ որ կ'ապրի մարդը». վասն զի անասնական այդ պէտքը կրնայ իրեն նիւթական կեանքը ապահովել, բայց չկրնար հանել զինքը բարձրագոյն նկա-  
տողութիւններու:

Հա՛րկ է զգացնել մա՛նաւանդ բարի ժողովուրդին թէ՛ իր մշակած արտը աղբի պարարտութեամբ չէ՛ որ կը սնանի միայն, այլ ինչ որ վերէն կուգայ՝ արեւ ու անձրեւ՝ մէկուրէն ճաճանչներն՝ միւսին կաթիլներն կը փխրեն իր ակօսները, կը լեցնեն իր շտեմարանները:

Հազարուամէկ պէտքեր կան, որոնք ամէնքը կենսական չեն կրնար հա-  
մարուել, արդար բաշխումի օրէնքն ալ չունենալով իրենց հետ. զի ինչ որ հա-  
րուստը իբրեւ պէտք կը ստեղծէ իրեն՝ աղքատին տառապանքն է այն. բայց՝ առանց վարանելու՝ կրնանք ըսել թէ՛ կրօնական պէտքը՝ որ հասարակ է ամե-  
նուն՝ շա՛տ դիւրագոյն եղանակաւ կը գտնէ իր գոհացումը. օգին ու լոյսին նման տիեզերական բարիք մ'է այն:

Հա՛րկ է զգացնել ժողովուրդին թէ՛ կրօնքը ճրի պարգեւ մ'է իրեն

տրուած, թէ՛ այդ մթնոլորտին մէջ ուզածին պէս կրնայ շնչել ինքը, առանց ընդունելու կարծրացած կեղեւանքներ՝ նախապաշարուածներ՝ որոնք բուն լոյսին ազդեցութեամբ պէտք է թօթափին, աւելի յստակ եւ աւելի պայծառ տեսութիւններ պարզելու համար հոգեկան նայուածքի առջեւ:

Պէտքերու կեղծիքներ ստեղծել եւ սաստկապէս լլկել ընկերական կեանքը՝ սխալ իմացուած քաղաքակրթութեան մը գործն է այն. կարկամ սեղմումներ տալ սրտին ու անոր զգացումներուն՝ սխալ իմացուած բարոյականի խստութիւնն է այն. հպարտութիւն ներշնչել մտքին ու անոր անկարգ շարժումներուն՝ սխալ իմացուած իմաստասիրութեան ոգին է այն. կապանքներ շինել հոգիին ու անոր ըզձանքներուն՝ սխալ իմացուած Աւետարանի մը կրօնքն է այն:

Թո՛ղլով միւսներն՝ մենք ուժգնակի կ'ողգենք շեշտել կրօնական պէտքը, ա՛յն որ իր ուղիղ իմացումովն արդէն բուն բարոյականի շաւիղն ալ կը բանայ մեր առջեւ լուսաւոր գիծերով:

Ո՞վ չէ համոզուած թէ այդ պէտքը կեղծիք մը չէ բնաւ, ո՛րչափ ալ անոր սնունդ մատակարարող նիւթերն ամէն ատեն չունենան նուրբ եւ կենդանի տարր մը իրենց մէջ. թէ հոգիին այդ ներքին աղաղակը խտաւոր գործարանաւորութեան մը վայնասունը չէ՛, եւ թէ՛ ընդհակառակն՝ մարդ անո՛վ մանաւանդ իր էութեան հետ կրնայ հաշտուիլ, անո՛վ միա՛յն ինքզինքը բարձր կը գտնէ, վե՛ր՝ անցաւորէն ու անասնականէն վե՛ր, ու անով կը ներդաշնակաւորէ իր ամէն մէկ քայլերը գարգացման ճամբուն վրայ:

Ըսինք թէ շատ դիւրին պայմաններով կը գոհանայ մեր կրօնական պէտքը. պարզ հաւատքին ու աղօթքին մէջն է այն: Ոչ հեթանոսութեան հարիւրեցնեան զոհի ճոխ հանդերձանքները եւ ո՛չ հրէական պաշտամունքի անհատուժ պատուէրները քրիստոնէին խիղճը չեն կրնար բռնաբարել իր փրկութեանը համար: Մեր հաւատքն է անշուշտ Աւետարանի՛նը. Անո՛րն որ մեզի հետ հաճեցաւ խօսիլ ու միշտ պիտի խօսի. Անո՛րն որ իր գիտակցութեան յստակ շեշտերովն «գերկնաւորս» պատմեց մեզի. Աստուածորդւոյն հաւատքն է այն: Նա ինքը մեր աղօթքն ալ ամփոփեց քանի մը հրաշալի տողերու պարզութեան մէջ, կրօնական պէտքին ամենէն սուր հնչիւնը դնելով մեր կուրծքին տակ, «Հայր մեր որ յերկինս ես»:

Տէրունական այդ աղօթքի ամէն մէկ մրմունջներն մեր կրօնական կեանքի թիւերն կ'ոլորակեն. այդ խնդրուածներն օրօրոցէն մինչեւ գերեզման ու անկէ ալ անդին մեր անսահման իղձերը կը հրահրեն:

Եւ ստուգի՛ւ, ամէն հասակի կրօնքն է դաւանիլ «Հայր մեր որ յերկինս ես». բայց ամենէն աւելի մանուկին կրօնքն է այն, անուշակ բուրումներու մէջ ծածանող էակին. այո՛, եւ ամենէն աւելի կարծես ա՛ն ունի իրաւունք ըսելու Աստուծոյ. «Սուրբ եղիցի անուն քո», կեանքի աղտեղութիւններուն հետ դեռ չչփուած, դեռ երկնքին սուրբ կապոյտին սիրահար. բայց բուն այդ ներշնչումն է որ վառ պիտի պահէ անոր սրտին խորը երկրի ամէն սուտ փառքերէն ու խաբկանքներէն անջատ բարոյական տենչ մը, եւ իր պատանութեա-

նը մէջ պիտի տայ զգալ իրեն՝ երկնքի թագաւորութեան հրապոյրը. «Եկեացէ արքայութիւն քո»:

Ա՛հ եթէ մանուկին շուրջն ապրող անտարբերներ՝ սկեպտականներ զլանան անկէ իր ոսկի ժամերուն այդ վայրկեանը՝ իր հոգեկան ցնձումներուն այդ լուրը ժպիտը, ա՛լ դժուար է որ կեանքի պատահարներուն հանդէպ՝ ուր յուսահատ հոգին կը մաքառի՝ կամ շիրմի մը վրայ հեծկլտալու ատեն՝ կամ մահիճի մը տառապանքներուն մէջ արիանայ այդ տղան՝ որ հիմա երիտասարդ մ'է մրմնջելու, «Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»: Թողէք որ այս զգացումներով աճի, մի խափանէք իր մէջէն կրօնքին պէտքը, հաճոյքներուն ամենէն փրկարարը: Քիչ մը վերջը ընտանիքի մը հայրն է նա, նոր յարկի մը տակ կ'ապրի, պզտիկներ ունի սնուցանելու համար, մեծ ճիգերով պիտի պատրաստէ անոնց ապագան, բայց պիտի չդադրի իր քրտինքներն իրենց արժէքին վերածելէ. «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

Գուցէ ակամայ անկումներ օր մը պիտի գլորեն գինքը, բայց նա փոխանակ մեղկանալու՝ փոխանակ հեշտ գտնելու այդ տղմուտ գայլուամները՝ պիտի թօթուէ ինքզինքն ու պիտի գոչէ. «Թող մեզ զպարտիս մեր»:

Զրկանքներ պիտի կրէ շատերէն, դաւ, սպառնալիք, կորուստ, բայց պիտի չմոռնայ իր ըսելիքը. «Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Կեանքի կռիւներէն յոգնած պահուն ալ՝ նոր ոյժ մը պիտի ոգեւորէ գինքը երբ երկինքէն խնդրէ. «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն՝ այլ փրկեա ի չարէն»: Եւ եթէ երկրի վրայ բախտ չունենայ տեսնելու իր երազած «Աստուծոյ արքայութիւնը» որ հոգիներու անթարգմանելի խաղաղութիւնն է, ուրիշ կեանքի մը մէջ պիտի ցանկայ անոր. «Զի քո է արքայութիւն՝ զօրութիւն եւ փառք յաւիտեանս»:

Դժուարին չէ հաստատել թէ այս տրամադրութիւններով օժտուած քրիստոնեան անհունապէս կը լեցնէ իր կրօնական պէտքը, այդ կեանքով սկսած մանուկներն են Աւետարանին կանչած հոգիները, անո՛նք են Եկեղեցւոյն սիրած նուիրական անդամները, անո՛նք են ապականած ընկերութեան աղը, մթազնած մտքերու մէջ նշուող ճրագը. – Ո՞վ պիտի պատրաստէ այդպիսիները:

Եղիշէ Արք. Դուրեան

# Աստուծոյ Արքայութեան Ըմբռնումը

Համատեսական աւետարաններուն մէջ նկարագրուած հարուստ երիտասարդին պատմութիւնը կարեւոր տեղեկութիւն կուտայ Աստուծոյ Արքայութեան արժանանալու պայմաններու մասին եւ միաժամանակ կը բացատրէ Աստուծոյ Արքայութիւնն սոյթի իմաստն ու հասկացողութիւնը:

Երեք աւետարանիչներուն արձանագրած դրուագը հետեւեալն է (ՏԵՍ Մատթ. 19.16-26, Մարկ. 10.17-27, Ղուկ. 18.18-27):

Հարուստ երիտասարդ անձ մը ներկայ ըլլալով եւ ունկնդրելով Նազովրեցի վարդապետին խօսած քարոզը, հմայուած անոր խօսքերէն, քաջութիւնը կ'ունենայ մօտենալու Յիսուսի եւ անոր հարց տալու իր միտքը չարչրկող խնդիր մը, թէ ի՞նչ ընելու է Աստուծոյ Արքայութեան մէջ յաւիտեանական կեանքը ժառանգելու համար: Վարդապետին պատասխանը այն կ'ըլլայ, որ եթէ հրէական օրէնսդրութեան Տասնաբանեայ պատուիրանները գործադրէ արժանի կը դառնայ Աստուծոյ Արքայութեան. այսինքն՝ մի՛ սպանաներ, մի՛ շնար, մի՛ գողնար, մի՛ սուտ վկայեր, պատուէ հայրդ եւ մայրդ (Ելից 20.12-16), ինչպէս նաեւ ընկերդ սիրէ քու անձիդ պէս (Ղեւտ. 19.18), որոնք բաղադրիչ տարրերն են բարոյական կեանքի: Երբ երիտասարդը կը խոստովանի որ պատանութենէն ի վեր կիրարկած է զանոնք, այն ատեն, Յիսուս խրատ կուտայ որ ունեցած հարստութիւնը աղքատներուն ու կարօտեալներուն բաշխելով հետեւի իրեն եւ սկսի հոգեւոր հարստութիւններ շահիլ Աստուծոյ Արքայութեան մէջ յաւիտեանական կեանք ունենալու համար: Հարուստ երիտասարդին ականջին հաճոյ չթուեցաւ Յիսուսի առաջարկը. ան չուզեց բաժնուիլ իր ունեցած նւթական հարստութենէն ու անոր պարգեւած հաճոյալի կեանքէն. գաղտնաբար ամբոխէն հեռացաւ տխրութեամբ:

Հարուստ երիտասարդին առակով Յիսուս դիտել տուաւ որ միայն Տասնաբանեայ պատուիրանները գործադրելով կարելի չէ արժանանալ Աստուծոյ Արքայութեան, այլ պարտաւոր ենք որդեգրել ծառայական կեանք մը եւ Քրիստոսանման ապրելակերպ մը: Աստուծոյ Արքայութեան մէջ յաւիտեանական կեանք ունենալու համար նախապայման է սիրել ու ծառայել մեր նմաններուն, օգնութեան հասնիլ կարօտեալներուն եւլն., այնպէս ինչպէս երկրի վրայ իր ապրած կեանքով օրինակ տուաւ Աստուածորդին: Անհատապաշտութիւնը եւ անձնասիրութիւնը մեծագոյն արգելքն է Աստուծոյ Արքայութեան արժանանալու համար:

Օրմանեան Սրբազան Հարուստ երիտասարդին Աստուծոյ Արքայութեան արժանանալու խնդրանքին առնչութեամբ հետեւեալ մեկնութիւնը տուած է.

«Արքայութեան արժանի ըլլալու երկու աստիճաններ կան. մին սովորական աստիճան, որ պատուիրաններու պահպանութեամբ կը բաւականանայ, միւսը կատարեալ աստիճան՝ որ բարեգործական արժանիքի առաւելութիւններ կը պահանջէ: Յիսուս տեսնելով որ մեծատունը սովորական արդարութեան աստիճանը արդէն ունենալ կը կարծէ, զայն կը հրաւիրէ կատարեալ աս-

տրճանին թեւակոխել: Եթէ կամփա, կ'ըսէ, կատարեալ լինել, եթէ Արքայութեան մէջ աւելի արժանիքի եւ փառքի հասնիլ կը փափաքիս, այլ բարեգործութեան եւ ողորմութեան արդիւնքն ալ պէտք է չհասիս, ունեցածդ աղքատներու եւ կարօտեալներու բաշխելով, եւ աշխարհային հոգերն ալ թողով՝ ինքզինքդ նուիրես Աւետարանի տարածման» (Համապատում, էջ 376):

Հետեւաբար յստակ կը դառնայ որ եթէ մարդ իր անձին եւ ունեցածին վրայ յոյս դնէ ու սիրտով կապուած մնայ իր ինչքերուն, անոր համար կարելի է չյաւիտենական կեանքը ժառանգել Աստուծոյ Արքայութեան մէջ. ընդհակառակը, եթէ անհատը ձերբազատուի աշխարհային հոգերէ, ապրի Քրիստոսի ուսուցած կեանքը, գործադրէ Անոր հրահանգները, այն ժամանակ արժանի կը դառնայ ու կը ժառանգէ Աստուծոյ Արքայութիւնը:

Թէեւ մարդ արարածին համար դժուար է այս բոլորը առանձին իրագործել, սակայն, երբ ան աղօթքի ճամբով հայցէ Աստուծոյ օգնութիւնը, Աստուած իր շնորհքներով ու պարգեւներով կ'օգնէ մարդուն որ ան հասնի իր նպատակին:

Ինչ որ մարդկութեան կարողութեան վեր է, աստուածային կարողութեան համար դիւրին է. կը խորհրդածէ Օրմանեան Սրբազան ու կ'աւելցնէ.

«Զի մարդ մը միայն ինքն իրեն մնացած չի կրնար իւր յաւիտենական փրկութիւնը պատրաստել եւ աստուածային օգնութիւնը եւ կամքը կ'առաջնորդեն հոգին յաւիտենական փրկութեան: Ծնորհաց վարդապետութեան դժուարին խնդիրն է այս, որ առիթ տուած է նաեւ բողոքական դրութեան մէջ ամենայն ինչ Աստուծմէ սպասելու, որ մարդուն գործն ու արդիւնքը բնաւ նշանակութիւն չունենան իւր փրկութեան մէջ: Ողջամիտ վարդապետութիւնն ալ կ'ընդունի շնորհքը եւ նախասահմանութիւնը, սակայն առանց ջնջելու մարդուն գործակցութիւնը, որպէսզի չջնջուի նաեւ ազատ կամքը, առանց որոյ արդարութեան եւ անօրէնութեան, հոգեւոր փրկութեան եւ դատապարտութեան կէտերը կը կորսնցնէին իրենց իսկական նշանակութիւնը: Մարդուն համար քաջալերական է գիտնալ եւ հաւատալ, որ եթէ անհնարութեան մէջ կը գտնուի, աստուածային շնորհքը կ'օգնէ իրեն եւ դժուարութիւնները դիւրին եւ անհնարինները հնարաւոր կը դարձնէ» (Նոյն. էջ 379–380):

Քրիստոսի հիմնած եկեղեցւոյ անդամակցութեամբ ապրելով աստուածահաճոյ կեանք մը եւ մարդոց նկատմամբ մեր բարեսիրական ու ծառայական գործունէութեան շնորհիւ՝ քաղաքացիները կը դառնանք Աստուծոյ թագաւորութեան (Մատթ. 25:34) եւ յաւիտենական կեանք կ'ունենանք (Յովհ. 12:50):

Կ. Պոլսոյ Պատրիարք Յակոբ Արք. Նալեան. «Քարոզգիրք ի վերայ Յայտնութեանն Յօհաննու» իր մեկնողական գործին մէջ անդրադառնալով «Հայր մեր» ի «Եկեղեցի արքայութիւն քո» հատուածին, մէջբերած է Կոռնէլիոսի չորս կերպով հասկացողութիւնը Աստուծոյ Արքայութեան գործարգմանաբար կը ներկայացնենք ստորեւ (Թարգմ. Գ.Բ.):

«Նախ, (անիկա) բոլոր արարածներէն վեր՝ Աստուծոյ Տէրութիւնն է, ինչպէս երանելին Դաւիթ կ'ըսէ. «Քու արքայութիւնդ յաւիտենական արքա-

յուլթիւն է, եւ քու տէրութիւնդ սերունդէ սերունդ պիտի երկարի»:

Երկրորդ, խորհրդական իմաստով առնելու պարագային՝ արքայուլթիւնը կը հասկցուի իբր բոլոր հաւատացեալներու հոգիներուն մէջ հաւատքի (շնորհիւ) Աստուծոյ թագաւորելը, որով սատանային տէրութիւնը կ'ընկճուի եւ մեղքը մեր մահկանացու մարմիններուն մէջ չի թագաւորեր. երբ մեր հոգիներուն մէջ Աստուած կը թագաւորէ, սատանան մեր մէջ տեղ չի գտներ, այլ հաւածական կ'ըլլայ, հետը՝ յանցանքներուն եւ իր արբանեակներուն, ու առաքինութիւնը կը թագաւորէ:

Երրորդ, Աստուծոյ արքայութիւնը երկինքն է, ուր Աստուած իր փառքով կը թագաւորէ սուրբերու եւ երանելիներու հոգիներուն վրայ: Ասոր կը ցանկային երանելիները. որովհետեւ երբ լսեցին Քրիստոսէ թէ՛՝ Ես եմ առաւօտեան պայծառ աստղը, նաեւ հոգին ու փեսան, որ պիտի գայ: Անոնք իբր հարսերը (Քրիստոսի) ըսին՝ «Եկո՛ւր»: Նոյնպէս ով որ լսէ՛ պիտի ըսէ «Եկո՛ւր», նաեւ ով որ ծարաւ է՝ պիտի գայ, ինչպէս Յայտնութեան մէջ գրուած է:

Չորրորդ, արքայութիւնը Աստուծոյ ամենակատար տէրութիւնն է, որ սատանայի, մեղքի եւ մահուան թագաւորութեան յաղթելով, դատաստանի օրը մինակը ինք կը թագաւորէ իր բարեկամներուն եւ թշնամիներուն վրայ. ըստ հետեւեալ խօսքին, որ կ'ըսէ. «Եւ այն տէրութիւնը պիտի տեւէ յաւիտեանէ յաւիտեան»: Որովհետեւ այն ատեն Մարդու Որդին իր փառքի աթոռին վրայ պիտի բազմի, եւ պիտի քննէ դատէ ամէն մարդիկը՝ ըստ իրենց գործերուն: Եւ ասոր վրայ, ոմանք կեանք պիտի ունենան եւ ոմանք ալ յաւիտենական նախատինք եւ ամօթ»:

Բարգէն Թօփճեան



# Մարդկայնութեան Չգացումը

Ըսի մարդուն պարտականութիւնները հանդէպ Աստուծոյ: Կ'ուզեմ հիմա խօսիլ մարդուն հանդէպ պարտականութիւններէ, չմոռնալով որ մարդուն հանդէպ պարտականութիւնները կը հասնին նաեւ Աստուծոյ, որովհետեւ մարդը Աստուծոյ պատկերն է:

Արդարութեան առաջին պարտականութիւնը կը վերաբերի Աստուծոյ եւ իրեն կը կապէ մեզ, երկրորդը՝ մարդուն: Առաջինին անունը կրօնք է, երկրորդինը՝ ողորմութիւն կամ մարդկութիւն: Կրօնքը Աստուծոյ արդարներու եւ պաշտողներու երեսոյթն է: Ան միայն կեանք է:

Աստուած մարդը մերկ եւ տկար ստեղծած է, անոր իմաստութիւն դասաւանդելու համար. ան անոր տուած է յատկապէս հաւատքի այս զգացումը, որպէսզի մարդը պաշտպանէ մարդը, սիրէ, օգնէ, բարձրացնէ, նախազգուշացնէ եւ պաշտպանէ վտանգներու դէմ: Ամէնէն զօրաւոր կապը, մարդիկը իրարու կապող, մարդկայնութիւնն է: Ան որ կը քակէ զայն՝ չարագործ մը եւ հայրասպան մըն է:

Բոլորս մեր սկիզբը կը ստանանք նոյն հայրէն, նոյն արիւնէն ենք ուրեմն: Ամենամեծ ոճիրը մարդը ատելուն կամ անոր չարիք ընելուն մէջ կը կայանայ: Այս պատճառով ալ մեզի արգիլուած է թշնամութիւն պահել կամ զայն առթել: Եթէ ուրեմն նոյն Հօր գործն ենք, ի՞նչ ենք եթէ ոչ եղբայրներ: Հոգիները միացնող կապը աւելի զօրաւոր է՝ քան մարմնական կապը: Ասոր համար Լուկրեսիոս կ'ըսէ.

Մենք բոլորս երկիւնքի սերմն ենք

Նոյն հայր մը ունինք ուրեմն...

Պէտք է ուրեմն մարդկայնութեան փաստ բերենք, եթէ կ'ուզենք մարդեր կոչուիլ: Մարդկայնութեան փաստ բերել կը նշանակէ միայն մարդը սիրել, որովհետեւ ան մարդ է, ինչպէս մենք ալ ենք:

Լակոսանոսիոս

# ԳՐԱՄԻՆ ՄԻՒՍ ԵՐԵՍԸ

Պօղոս Առաքեալի Հռովմայեցիներուն ուղղուած նամակին Ը. գլուխին 1-11 համարներուն մէջ՝ ան կը կեդրոնանայ առաւելաբար մէկ զաղափարի վրայ. ատիկա Ս. Հոգիով նոր կեանքն է՝ Քրիստոսի միջոցաւ մեզի տրուած: Եւ այս հոգիի կեանքին դէմ յանդիման կը բերէ, յաճախ բաղդատական ոճով, մարմնական կամ ֆիզիքական կենցաղը:

Գրեթէ բոլոր կրօններուն մէջ, երբ իմացական կամ հոգեկան արժէքներու կարեւորութիւնը կը շեշտուի, անոր որպէս հակոտնեայ ընթացք՝ անմիջապէս մարմնական կամ նիւթական մտահոգութիւնները երեւան կու գան: Կարելի չէ մտածել մարդ արարածին մասին՝ առանձին նկատի առնելով անոր մարմինը եւ կամ հոգին: Ըշմարիտ քրիստոնեան այն անհատն է, որ իր մարմինը կը դարձնէ անօթը, ընդունարանը Աստուծոյ Հոգիին: Մարմին եւ հոգի կը կազմեն մէկ ամբողջութիւն, որուն առողջ սնուցումը իւրաքանչիւրիս պարտականութիւնն է: Ըիրջ է թէ ի վերջոյ պիտի գայ ժամանակը, երբ պիտի մտածենք անցողականին եւ մնայունին, մարմնին ասպականութեան, ոչնչացումին ու հոգիին անապականութեան, յաւերժութեան մասին: Բայց այնքան ատեն որ կ'ապրինք այս աշխարհի վրայ, երկուքին ալ առողջ պահպանումը կը մնայ մեր պարտաւորութիւնը:

Արդեօք ի՞նչ է ճշմարիտ կեանքը: Քրիստոնեան ունի՞ նպատակակէտ մը՝ որ դիմանայ ժամանակին, եւ մանաւանդ Աստուծոյ դատաստանի արդարութեան: Այս հարցման պատասխանը անկասկած «Հոգին» է, այն ինչ որ այս աշխարհէն չէ՝ թէեւ անոր մէջ կ'ապրի: Նոյն այս Հոգին Ս. Գրքի առաջին էջերուն մէջ կը նկարագրուի որպէս Աստուծոյ շունչը, փչուած մարդու ռզուլներէն, որը նաեւ հանգչեցաւ Յիսուսի վրայ՝ երբ միտուեցաւ: Ազամով ասպականած մեր բնութիւնը՝ վերստին ծննդեամբ իր իրա՛ւ պատկերը կը գտնէ Ս. Հոգիին ընկալումովը: Եւ ա՛յս է մեր բո՛ւն կեանքը, որ կը սկսի այս նիւթական աշխարհէն՝ երթալու եւ միանալու համար Աստուծոյ, պայմանաւ որ հոս մեզ համակող ձգտումները միմիայն փառաւորեն իր անունը: Այն ատեն միայն մարմինը իմաստ կ'ունենայ, հոգ չէ թէ կարճ ժամանակամիջոցի մը համար. ան կը դառնայ ընդունարան Ս. Հոգիին, եւ միջոց Արարչին պատկերին պահպանման:

Օր մը՝ հրեայ պատասխանատուներ ուզեցին Քրիստոսը այս աշխարհի գործերուն մէջ յանցանքի վրայ բռնել: Անոր մօտենալով ըսին. «Ըի՞չդ է, արդա՞ր է որ մենք կայսեր տուրք տանք»: Յիսուս հասկցաւ անոնց ներքին տրամադրութիւնը եւ պատասխանեց. «Ինչո՞ւ կը փորձէք զիս. տուէ՛ք ինձի դահեկան մը»: Անոնք ալ հնչուն դրամ մը ցուցուցին անոր: Ապա մեր Տէրը հարցուց անոնց. «Որո՞ւն պատկերը կայ հոս»: Անոնք ըսին. «Կայսեր»: Ուստի յարեց. «Ձայն որ կայսրինն է՝ կայսրին տուէ՛ք, եւ զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ»: Քանի կ'ապրինք, մեր կեանքն ալ իր բաժինը ունի տալու այս աշխարհին: Մեր մարմինը հնչուն դրամին մէկ երեսն է. կայսեր պատկերն է,

աշխարհի բաժինը: Բայց որեւէ ատեն՝ քու կեանքիդ մէջ դարձուցա՞ծ ես դրամին միւս երեսը: Փորձէ՛, եւ պիտի տեսնես թէ հոն կայ գծուած Աստուծոյ պատկերը: Անիկա քու մէջդ դրոշմուած է, բայց շատ հազուադէպ պարագաներու մէջ կ'անդրադառնաս անոր գոյութեան: Քրիստոնեայ պիտի չըլլայինք՝ եթէ դրամին այս կամ այն երեսը ունենայինք միայն: Ճշմարիտ հաւատացեալը անոր երկու կողմերն ալ կը տեսնէ եւ զանոնք կը պահէ ա՛յնպէս, որ իր երկրային կեանքի աւարտին տուած ըլլայ աշխարհի բաժինը աշխարհին, եւ մասնաւանդ Աստուծոյ բաժինը՝ Աստուծոյ:

Կեանքը ներդաշնակութիւնն է մեր մէջ գտնուող ոյժերուն, ապրումներուն, տենչերուն եւ ձգտումներուն: Բնաւ չկարծենք թէ հոգեւոր կեանքը աննիւթ է: Անիկա համադրութիւն մըն է, զոր մենք կրնանք տեսնել հոգիի թռիչքին մէջէն՝ մարմնի կեանքին խողովակովը: Քրիստոս ինք ալ չմարմնացա՞ւ...: Ան մարդեղութեան միջոցաւ մեզքը սպաննելու գաղտնիքը ցոյց տուաւ մեզի: Մենք ալ ունինք նոյն մարմինը, մարդկայինը, որպէսզի մեր Տէրոջ օրինակով ու փրկագործութեամբ մեզքը մեր մէջ սպաննենք եւ անկէ ետք հոգիի կեանքին երջանկութիւնը գտնենք: Մեզի՛ կը մնայ մեր կեանքին մէջ դնել շեշտը կա՛մ մարմնին, կա՛մ հոգիին կարեւորութեան վրայ: Եթէ միմիայն ձգտինք մարմնականին, Պօղոս Առաքեալ կ'ըսէ թէ անոր վախճանը մահ է: Իսկ եթէ խորհինք հոգիին փրկութեան մասին, գործածելով մարմինը որպէս միջոց եւ Քրիստոսի կեանքն ու Աւետարանը իբր գէնք, այն ատեն կը գտնենք կեանքը եւ խաղաղութիւնը: Մեր հոգին յարութիւն կ'առնէ մեր մէջ եւ կը միանայ անոր, որմէ շունչ առինք եւ որուն յաւիտեան կը պատկանինք: Մեր այս կեանքը կ'ըլլայ յաւիտեանականութեան մէջ շատ կարճ՝ սակայն միանգամայն կարեւորագոյն ժամանակաշրջանը: Ճակատագրական մէկ հարց կայ. պիտի կրնա՞նք դրամին միւս կողմն ալ դարձնել, եւ Անոր պատկերովը ապրիլ...:

Օշական Արք. Զօրյեան

### Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Զոհրապ եւ Սօսի Սարաֆեան	100 տոլար
Յովհաննէս Զիլինկիրեան	100 տոլար

# ԽԱՉԸ

Թէ պաշտումի թափն ունենաս՝  
Տէրն զոյգ մը թեւ քեզի կու տայ,  
Որպէսզի Իր Ոյժը անհաս  
Սաւառնացնես երկրի վըրայ:

Թէ տեսիլներ ունենաս դուն՝  
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,  
Որպէսզի Ի՛ր կամքը արթուն  
Հանդիսացնես երկրի վըրայ:

Թէ բարձունքէ մ'իտօսիս իր հետ՝  
Ինքը քեզի շե՛շտ մը կու տայ,  
Որպէսզի Իր Խօսքը յաւէտ  
Արձագանգես երկրի վրայ:

Իսկ Իր լոյսին թէ երթաս մօտ՝  
Ինքը քեզի ջահ մը կու տայ,  
Որպէսզի Իր Փառքն անաղօտ  
Վարդավառես երկրի վըրայ:

Թէ համբուրուիս հետ Իր վերքին՝  
Ինքը քեզի կեանք մը կու տայ,  
Որպէսզի Իր Շունչը անգին  
Ոգեւորես երկրի վըրայ:

Եւ այդ Ոյժը, այդ Կամքն ու Խօսք  
Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սուկ,  
Այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համայն՝  
Քեզի տըրուած ԽԱՉՆ է միայն:

Շահան Ռ. Պէրպէրեան

# ԵՂԻՇԷ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ

«Ես ննջեմ եւ սիրտս իմ արթուն կայ»:

Աստուածաշնչական այս խօսքը, որ բնաբանն է Եղիվարդի բանաստեղծական հատորներէն մէկուն («Անցորդը»), խորապէս կը բնորոշէ նաեւ Եղիշէ Տէրտէրեանի նկարագրին կարեւոր մէկ յատկանիշը՝ սրտի տէր մարդ մը ըլլալը:

Հակառակ իր շարք մը մարդկային տկարութիւններուն, ան միշտ ալ եղած է մէկը, որ գիտէր սրտէն տալ: Մտքէն առաջ իր սիրտն է որ կը բաբախէր: Հոգեկան զգայնութիւնները աւելի ծանր կը կշռէին իր արարքներուն եւ դատումներուն մէջ քան մարդկային թուարկուած հաշիւները:

— Ես կը քնանամ բայց սիրտս արթուն է:

Ու բոլոր անոնք որ Եղիշէ Տէրտէրեանը ճանչցեր էին մօտէն՝ իր մտերմութեանը մէջ, կրնան վկայել որ իր սիրտը միշտ մնաց արթուն եւ հսկեց իր ստանձնած բոլոր պաշտօններուն եւ պատասխանատուութեանց վրայ եւ շատ անգամ ի վնաս իրեն:

Իր սիրտն էր որ կը խօսէր իր բոլոր գործերուն մէջ, յիշեցնելով մեզի ժողովրդական հին եւ իմաստուն վկայութիւն մը:

— Սիրտս խօսեցաւ:

Նախ քան Եղիվարդի քերթողական տաղանդի մասին մեր գրելը, կարեւոր նկատեցի անդրադառնալ իր մարդկայնական յատկանիշներուն, որովհետեւ այդ յատկանիշները ունեցած են իրենց կարեւոր անդրադարձները թէ՛ իր անձին եւ թէ՛ գրական իր տաղանդին:

## ՄԱՐԴԸ

Եղիշէ Սրբազան իր ստանձնած բոլոր պաշտօններուն մէջ եւ բոլոր դիրքերէն վեր եւ անդին կը յայտնուի իբրեւ ճշմարիտ մարդ մը: Ծիշդ ա՛յնպէս՝ ինչպէս պիտի բնորոշէր Տէրտուղիանոս Հայրապետ իր սա խօսքով. «Ես մարդ եմ եւ ամէն ինչ որ մարդկային է օտար չէ ինձ»:

Մարդկայնական բոլոր զգայնութիւնները ամբողջացուցիչ տարրերն են մարդ էակին: Անհնար է կատարեալ մարդ ըլլալ եւ գերծ մնալ մարդկային տկարութիւններէ: Ահա թէ ինչու մեր իմաստուն հայրերը Մաշտոցի մէջ գրեր են հետեւեալը. «Ո՞վ իցէ մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ», «գի դու ես, Տէր, առանց մեղաց»: «Ո՞վ կրնայ մարդ ըլլալ եւ չմեղանչել, որովհետեւ, Տէր, միայն դուն ես առանց մեղքի»:

Եղիշէ Արք. Տէրտէրեանի պատրիարքութեան տարիներուն, յաճախ իր անձը բռնու քննադատութեան թիրախ դարձած էր: Ան ամբաստանուած էր պատրիարքարանի կալուածներու անճիշդ տնօրինման համար: Ամբաստանուած էր տարիներ առաջ ձեռագրած թանգարանի շարք մը շատ արժէքաւոր ձեռագիրներու Անգլիոյ մէջ աճուրդի հանման մէջ: Ամբաստանուած էր նաեւ

Կիրիկիոյ Կաթողիկոսարանի պատմական Ս. Աջերու անհետացման համար:

Մենք որ ատենին շատ մօտէն հետեւած ենք վերոյիշեալ իրադարձութեանց, կրնանք հաստատապէս վկայել որ Եղիշէ Սրբազան ոչ մէկ մասնակցութիւն ունեցած էր կալուածներու անճիշդ տնօրինման մէջ: Ոչ մէկ մասնակցութիւն ունեցած էր մեր թանկագին ձեռագիրներու Անգլիոյ մէջ աճուրդի հանման, ինչպէս նաեւ Ս. Աջերու անհետացման մէջ:

Իր սխալը եղած էր թերեւս այն, որ աւելի ետք՝ երբ իմացած էր վերոյիշեալ ապօրինութիւնը կատարողներուն ինքնութիւնը, չէր մատնած զանոնք, որովհետեւ այդ անձերը շատ մօտիկ եղած էին իրեն:

Հոս եւս ան իր սրտին անսացած էր, քան անսայլու հանրային դատաստանին:

Կարեւոր կը նկատեմ սակայն հաստատապէս շեշտել, որ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան, ըլլա՛յ Երուսաղէմի, ըլլա՛յ մեր ազգի սրբութեանց հանդէպ ունէր անձնազոհութեան համազօր գուրգուրանք եւ նուիրում:

Եղիշէ Տէրտէրեան իր մահուընէ կարճ ժամանակ առաջ, գրած էր հետեւեալը.

«Մարդեր կան որոնք կը պատկանին ժամանակին, եւ մարդեր՝ որոնք նշարտութեան: Անոնք որ կը պատկանին միայն ժամանակին՝ սովորական մարդեր են, իսկ անոնք որ կը պատկանին նշարտութեան՝ վերացական անձնաւորութիւններ են: Մեծ մարդը ան է որ կրնայ պատկանիլ թէ՛ ժամանակին եւ թէ՛ նշարտութեան»:

Եղիշէ Տէրտէրեան մա՛րդն էր ժամանակին եւ մա՛րդն էր ճշմարտութեան:

## ՆՈՒԻՐՈՒՄԻ ՄԱՐԴԸ

Ամենէն շատ եւ ամենէն աւելի Եղիշէ Տէրտէրեան իր սիրտը տուած էր մեր Եկեղեցիին, որուն ծառայութիւնն ու նուիրումը կազմեց իր մեծագոյն փառքը:

Ծնած էր Վասպուրական (Կայնիմիրան) եւ տղայ տարիքին որբացած՝ աչքը բացաւ ան Երուսաղէմի Հայոց վանքին մէջ եւ որուն ժառանգաւորաց վարժարանէն ներս ստացաւ իր կրթութիւնը:

Շնորհիւ իր բնատուր տաղանդին, ան գրաւեց ուշադրութիւնը իր բոլոր դասատուներուն: Իր ուսուցիչները՝ Եղիշէ Պատրիարք Դուրեան եւ Թորգոմ Պատրիարք Գուշակեան, ինչպէս նաեւ Յակոբ Օշական եւ Շահան Պէրպէրեան, ճանչցան իր մէջ ապագայ մեծ առաջնորդն ու եկեղեցականը, բանաստեղծն ու մտաւորականը:

Հայոց Եկեղեցին Հայ ժողովուրդի հոգեկան հարստութեանց ամբակուռ բերդն է, եւ ինք այդ բերդին նուիրեալ զինուորը եղաւ, իր վաղ պատանեկութենէն մինչեւ իր մահը:

Աւելի քան քսան տարիներ ան վարեց Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը: Հայ ժողովուրդի ազգային պատմութեան եւ եկե-

ղեցական պատմութեան տիպար դասատուն եղաւ եւ սերունդներ դաստիարակեց:

Ամէն կողմ են իր աշակերտները: Անոնց մէջ կան գրողներ, ուսուցիչներ, խմբագիրներ, հոգեւորականներ, մտաւորականներ եւ համեստ ազգայիններ:

Շուրջ վաթսուն տարիներ ծառայեց ան Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Երուսաղէմի Ս. Աթոռին:

Եղիշէ Սրբազանի նուիրումին եւ ծառայութեանց մէջ կարեւոր տեղ մը կը գրաւէ «Սիոն» ամսագրի խմբագրութիւնը: Աւելի քան քառասուն տարիներ ան խմբագրեց Ս. Յակոբեանց այս պաշտօնաթերթը եւ իր շրջանին «Սիոն» դարձաւ Սփիւռքի կրօնական, գրական, իմաստասիրական եւ բանասիրական ամենէն բովանդակալից ամսագրերէն մին: Եղիշէ Սրբազան, որպէս հմուտ եւ բազմատաղանդ խմբագիր, թերթը պահեց հետաքրքրական եւ օժտեց զայն իր բեղուն գրչի արգասիքներով:

Չմոռնանք որ «Սիոն» ամսագրի աշխատակիցներ էին նաեւ ներհուն մտաւորական եւ իմաստասէր Շահան Պէրպէրեանը եւ մեծանուն գրական քննադատ Յակոբ Օշականը:

Թորգոմ Փոպօանեան  
(Ականաւոր հայ գրական դէմքեր)



# ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԵՒ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

## Կենսագրում Մը:

Ծնած է Քեսապ 1932-ին: Աւագանի անունը՝ Նշան: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Նախակրթարանին մէջ:

1946-ին կ'ընդունուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեմանք: 1952-ին քահանայ կը ձեռնադրուի, կ'օծուի, ու կը կատարէ կուսակրօնութեան ուխտ: Կը կոչուի Գարեգին աբեղայ՝ ի յիշատակ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի:

Դպրեմանքին հսկիչ կ'ըլլայ, միաժամանակ դասեր կը ստանձնէ: Վարդապետական աստիճանի տիրանալու համար թեզ կը գրէ «Հայց. Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը Ըստ Հայ Շարականներու» տիտղոսով: 1955-ին վարդապետ կը ձեռնադրուի:

1956-ին կը կարգուի տեսուչ դպրեմանքին: Յաջորդ տարի կը մեկնի Անգլիա եւ Օքսֆորտի մէջ աստուածաբանութեան կը հետեւի: Այն ատեն կը գրէ իր գլուխ գործոցը՝ «The Council Of Chalcedon And The Armenian Church»:

1960-ին կը դառնայ Անթիլիաս եւ դպրեմանքին տեսչութիւնը կը վերստանձնէ:

1963-ին ծայրագոյն վարդապետ կ'ըլլայ: Իսկ յաջորդ տարին՝ կը բարձրանայ եպիսկոպոսութեան կարգին: 1973-ին արքութեան պատիւ կը ստանայ:

1960-ական թուականներէն գործօն մասնակցութիւն կ'ունենայ միջ-եկեղեցական յարաբերութիւններու մէջ: 1975-ին Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՆԽ) Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն փոխ-ատենապետ կ'ընտրուի:

1971-ին կը նշանակուի Իրանա-Հնդկաստանի թեմին Հայրապետական Պատուիրակ, ապա կ'ընտրուի Առաջնորդ:

1973-ին՝ Կաթողիկոսական Փոխանորդ նշանակուած Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմին, ապա ընտրուած Առաջնորդ:

1977-ին կ'ընտրուի Աթոռակից կաթողիկոս Կիլիկիոյ: 1983-ին կ'ըլլայ Գահակալը Ս. Աթոռին:

1995-ին կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Վախճանեցաւ 1999-ին՝ յետ երկամեայ տանջալից հիւանդութեան մը:

## Աստուածաբանական Վաստակ:

Այստեղ միայն պիտի ներկայացնեմ շարքը անոր աստուածաբանական գիրքերուն: Ուստի, նկատի պիտի չունենամ աստուածաբանական կամ բարո-

յագիտական տարրերով գրուած, այլ գրական եւ հրատարակագրական գիրքերն ու գրքոյկները:

Ա.- Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը Ըստ Հայ Շարականներու, Գանատա, 2003:

Ասիկա Գարեգին աբեղայ Սարգիսեանի վարդապետութեան աստիճանի ստացման համար գրած թեզն է:

Հեղինակը միշտ ուզած էր վերամշակել այս ուսումնասիրութիւնը, սակայն վարչական պարտաւորութիւններու բեռին տակ չէ կրցած իր ցանկութիւնը իրականացնել: Միայն Նոր Շրջանի «Հասկ» Հայագիտականին մէջ հրատարակելու նպատակով՝ աշխատած էր գլուխի մը վրայ («Մարդու Բնութեան Ըմբռնումը Հայ Շարականներուն Մէջ») եւ երկու մասի («Հայկական Շարականները Աղբիւր Հայ Աստուածաբանութեան» եւ «Եկեղեցւոյ Ըմբռնումը Հայ Շարականներուն Մէջ»):

Թեզը խմբագրած եւ հրատարակած է պրն. Վազգէն Ղուկասեան:

Գիրքը կը բացուի մտաւորական, ուսուցիչ եւ գրող Գարեգին Վեհափառի մասին Արամ Ա. Կաթողիկոսի վկայութեամբ: Արամ կաթողիկոս գրած է «Վստահ եմ, որ հայ եկեղեցւոյ ժամանակակից շրջանի պատմիչը Օրմանեանի, Դուրեանի, Գուշակեանի եւ այլ հոգեմտաւոր գազաթններու շարքին արժանի տեղ մը պիտի տայ Գարեգին Վեհափառին»:

Պրն. Ղուկասեան գրութեամբ մը, որ կը կրէ «Գարեգին Վեհափառի Գրաւոր Ու Բանաւոր Ժառանգութիւնը» անունը, բացատրութիւն տուած է Գարեգին Ա. Աստուածաբանական եւ Հայագիտական Մատենաշարին մասին, որուն երկրորդ համարն է այս գիրքը: Նաեւ խօսած՝ Երանաշնորհ Վեհի գրաւոր եւ բանաւոր աւանդութեան շուրջ:

Թեզը կը բացուի Գարեգին աբեղայի յառաջաբանով, ուր գրուած է «...մեր նպատակը եղաւ փնտռել, դասաւորել ու վերլուծել վարդապետական տարրերը մեր շարականներուն, առանց երբեք նկատի ունենալու զանոնք իբրեւ բացարձակ, զուտ վարդապետական գրութիւններ»:

Մատենագիտութիւն անունով բաժին մը կը յաջորդէ, որով հեղինակը փորձած է ներկայացնել նիւթին առնչուած ցուցակ մը եւ կատարել բացատրական նկատողութիւններ անոր վերաբերեալ: Նպատակ ունենալով իր աշխատանքին տեղը որոշել եւ դիրքը ճշդել՝ շարականներու մասին մինչեւ իր օրը եղած պրպտումներուն մէջ: Այստեղ գրած է շարականի բնագիրներուն, թարգմանութիւններուն եւ կարեւոր ուսումնասիրութիւններուն մասին:

Ներածութեամբ խօսած է շարականներուն մասին «իբրեւ մշակութային, գրական երեւոյթ մեր սրբազան գրականութեան մէջ»: Ան քննած է շարականներուն բովանդակութիւնը եւ կառուցուածքը. նաեւ ներկայացուցած անոնց «պատմական խորք»ը, այսինքն՝ կատարած է մատենագրական ուսումնասիրութիւն:

Առաջին գլուխով գրած է Հայ եկեղեցւոյ աստուածաբանութեան ընդ-

հանուր նկարագրին վրայ: Երկրորդով՝ Աստուածութեան անիմանալիութեան: Երրորդով՝ յայտնեալ աստուածութեան կամ Յայտնութեան: Չորրորդով՝ Ս. Երրորդութեան: Հինգերորդով՝ Աստուած Հօր: Վեցերորդով՝ Աստուած Որդիին: Եօթներորդով՝ Աստուած Հոգիին: Ութերորդով՝ Եկեղեցւոյ: Վերջինը՝ մարդու բնութեան:

Գրքի աւարտին կայ ցանկ մը օգտագործուած աղբիւրներու:

Բ.- Հայաստանեայց Եկեղեցին Իր “Մատայական Կերպ”ին Մէջ, Անթիլիաս, 1955: Բ. հրատարակութիւն՝ Նոր Զուլա, 1973: Գ. հրատարակութիւն՝ Անթիլիաս, 1994:

Հեղինակը յառաջաբանին մէջ գրած է, թէ գրքոյկին բովանդակութիւնը «իր գլխաւոր մասերով» կարգացուած է երկու դասախօսական առիթներու եւ 1954-ին՝ Հայ եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Ուսուցիչներու Տարեկան Համագումարին, որ կայացած է Անթիլիաս: Իբր գրքոյկ առաջին հրատարակման առեւ՝ 1955-ին բնագիրը ճոխացուած է «որոշ յաւելումներով, յատկապէս բացատրական ծանօթութիւններով»:

Երկրորդ հրատարակութեան առիթով՝ 1973-ին, հեղինակը վերատեսութեան ենթարկած է առաջին հրատարակութիւնը, զայն արեւելահայերէնի վերածած եւ «մի փոքր եւս» ընդլայնած ու պարզացուցած: 1994-ին լոյս ընծայուածը նոյնութեամբ երկրորդ հրատարակութիւնն է:

Հեղինակը այս գրքոյկով երկու նպատակ ունեցած է նախ՝ յատուկ ուշադրութեան եւ արժեւորումի առարկայ դարձնել Հայ եկեղեցւոյ պատմութեան այն էջերը եւ կէտերը, որոնք անոր «ծառայութեան մատնացոյց երեւոյթներն են՝ առանց լինելու այդ ծառայութեան ամբողջական կամ համատեսական պատկերը»: Ապա՝ «անցեալը վերակենդանացնել ոչ թէ սոսկ անցեալը պանծացնելու մտքով, այլ մեր ներկան անցեալի ոգով, բայց նոր աշխոյժով կենսաւորուած տեսնելու բուն ցանկութեամբ»:

Ներածութեամբ հեղինակը գրած է Քրիստոս տիրոջ եւ ծառային մասին: Քրիստոսի ամբողջ երկրաւոր կեանքը սպասաւորութիւն մը եղաւ: Եւ անոր «յերկրէ յերկինս համբարձումից յետոյ մինչեւ այսօր» եկեղեցին իբր «խորհրդական մարմին»ը անոր՝ կը շարունակէ նոյն սպասաւորութիւնը: Քրիստոսի եկեղեցւոյ իբր մէկ ճիւղը՝ Հայ եկեղեցին ալ սպասաւորութեան մարզ մըն է:

Հայ եկեղեցւոյ սպասաւորութիւնը գլխաւոր երկու ուղղութիւն ունի. ա, գուտ կրօնական. եւ բ, ազգային:

Գրքոյկով հեղինակը ձգտած է միայն «ընդգծել, մատնանշել» Հայ եկեղեցւոյ “ծառայական կերպ”ին այլազան երեսները եւ ի լոյս բերել կարելի չափով անոր դերը՝

Ա.- Մեր ազգային համայնական կեանքին մէջ,

Բ.- Ընդհանուր քրիստոնէական Եկեղեցւոյ պատմութեան մէջ:

Արդ, գրքոյկը երկու մասէ կը բաղկանայ:

Առաջին մասին անունն է. Հայաստանեայց Եկեղեցին՝ Ի Սպաս Հայ Ժո-

ղովորդին: Հեղինակը, ըստ ծրագրին որ պարզած է յառաջաբանի վերջաւորութեան, գայն զարգացուցած է եռաճիւղ եւ խօսած է Հայ եկեղեցւոյ մասին իբր Հոգեւոր սնունդի աղբիւր հայ հոգիին, իբր օճախ հայ մշակոյթին, եւ իբր կեդրոնական ոյժ հայ ազգի ընկերային-քաղաքական կեանքին մէջ:

Երկրորդ մասին անունն է. Հայաստանեայց Եկեղեցին Ի Սպաս Ընդհանուր Քրիստոնէական Աշխարհին: Այս մասով հեղինակը Հայ եկեղեցին ներկայացուցած է նախ իր պատմական եւ արդի առաքելութեան մէջ՝ թէ՛ ազգային եւ թէ՛ միջազգային ու միջ-եկեղեցական առումներով: Ապա խօսած է ընդհանուր քրիստոնէական մշակոյթին անոր բերած ծառայութեան վրայ: Երրորդ կէտով մըն ալ անդրադարձած է արեւելքի քրիստոնէութեան մէջ անոր քաղաքական դերին, առանց որուն «տարբեր կը լինէր կեանքի ընթացքը Արեւելքի քրիստոնէութեան եւ թերի՝ նրա պատմութիւնը»:

Վերջաբան մը կը կնքէ գրքոյկը, որով հեղինակը կոչ մը ւրած է, գրելով. «Ես հաւատում եմ, որ մենք ունենք շատ տուեալներ մեր եկեղեցական-համայնական կեանքը զարգացնելու եւ անցեալի կեանքին արժանի եւ պատուաբեր շարունակութիւնն անելու, յառաջադիմութեան տեսիլքով եւ նոր նուաճումների եւ իրագործումների յաւելումով: Մնում է արդի կեանքի պայմանների համաձայն իրատես ու հեռատես միտքով եւ ներդաշնակ ճիգերով, կեդրոնացնել համակարգ ջանքերով կեանքի կոչել այդ տուեալները եւ լծուել աշխատանքի»:

Գ.- Նահատակութիւն Քառասնից Մանկանց, Մատենաշար «Հաղորդութիւն Սրբոց», Թիւ Ա., Պէյրութ, 1957:

Յառաջաբան մը գրուած Տ. Գրիգոր Քհնյ. Քէօիւքեանի կողմէ, որ ներկայացուած է իբր վարիչ Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ Կրօնական Լսարանի: Հրատարակութիւնը լսարանինն է:

Գարեգին վարդապետ նախքան Քառասնից Մանկանց մասին իր գրութիւնը, «Հաղորդութիւն Սրբոց» վերնագրուած սրբութեան իր հասկացողութիւնը պարզած է:

Ի՞նչ է սրբութիւնը, ըստ իրեն, կամ ինք ինչպէ՞ս հասկցած է սրբութիւնը:

«Սրբութիւնը ըլլալու վիճակ մըն է մարդերուն մէջ, աւելին՝ ապրելու կերպ մը՝ որ Քրիստոնեային — իրաւ մարդուն՝ Աստուծոյ որդիութեան զգացումով ապրող անհատին — պարագային միակ ու բնական ձեւն է կեանքի:

Վիճակ մը՝ որուն մէջ ներկայ են տիրական հանգամանքով՝

- Զգացումը Աստուծոյ երկիւղին,
- Մտածումը Աստուծոյ ճշմարտութեան,
- Զգտումը Աստուծոյ կատարելութեան:

Ապրելու կերպ մը՝ որուն մէջ կը գործեն իբրեւ մղիչ եւ ուղղիչ ոյժ կեանք՝

- Հաւատքն առ Աստուած,

- Յոյսն յԱստուած,
- Սէրն Աստուծոյ:

Եւ այս բոլորը՝ Անոր Որդւոյն անձին մէջէն...»:

Գարեգիւն վարդապետի կարծիքով «սուրբ» են ա՛յն մարդերը, որոնք՝ լեցուած Հոգիին ոյժով՝ գիտութեամբ, առաքինութեամբ, արիութեամբ եւ տեսլական ներշնչումով, կը մօտենան մարդոց, մտնելով աշխարհին մէջ, ու մեղքի ծովուն մէջ իրենց անձը կը պահեն վե՛ր մեղքէն, հանդիպելով անոր թէեւ, բայց յաղթելով անոր: Եւ աւելին՝ ուրիշներն ալ ազատելով մեղքի ծովուն ալիքներէն:

Թէ ինչպէ՞ս սուրբերը կը հանդիպին Աստուծոյ:

Ըստ Գարեգիւն վարդապետի, «Սուրբերը կը բարձրանան իրենց մարդկային ոյժին վերթեւումով, բայց կը հանդիպին Աստուծոյ ոյժին՝ Հոգիին, Շնորհքի մթնոլորտին, որ զիրենք կը տանի վեր՝ առ Աստուած: Եւ ճի՛շտ հոս է անոնց տարբերութիւնը միւս մարդերէն»:

Եկեղեցւոյ մը կեանքին համար սուրբերը շատ կենսական են, որովհետեւ «Սուրբերն են, էպպէս, որ կենդանի կը պահեն եկեղեցւոյ մէջ Աստուծոյ Հոգին, առանց որուն եկեղեցին պիտի պարպուէր իր հարազատ էութենէն, ինչպէս մարդկային մարմինը՝ հոգիէն»:

Քառասնից Մանկանց մասին բաժինը վարքագրութեան թարմ եւ հետաքրքրական փորձ մըն է:

Գ.- The Council Of Chalcedon and The Armenian Church, Լոնտոն, 1965: Բ. հրատարակութիւն՝ Նիւ Եորք, 1975: Գ. հրատարակութիւն՝ Պէյրութ, 1982: Գ. հրատարակութիւն՝ Նիւ Եորք, 2006:

Գիրքը ձօնուած է Չարեհ Կաթողիկոսին:

Յառաջաբանով հեղինակը կը տեղեկացնէ, թէ գիրքը գրուած է իբր թէզ Օքսֆորտ համալսարանին մէջ B. Litt. վկայականի համար: Հրատարակութեան առիթով ուսումնասիրութիւնը հիմնական փոփոխութեան մը չէ ենթարկուած: Միայն յաւելում մը ունեցած է չորրորդ գլուխով:

Ան յայտնած է, թէ իր անկեղծ համոզումն է, որ Քաղկեդոնի եւ յետՔաղկեդոնի պատմութեան եւ աստուածաբանութեան առարկայական եւ խոր քննութիւնը կրնայ օգնել քրիստոնէական հաւատքի ամենէն էական կալուածը՝ քրիստոսաբանութիւնը առաւել խորութեամբ հասկնալու:

Ներածութիւնը, որ կ'երկարի էջ 1-21:

Քաղկեդոնի ժողովը Հայ եկեղեցւոյ համար ծանր հետեւանքներ ունեցաւ: Հայ եկեղեցւոյ կեցուածքը ընդգէմ անոր՝ ոչ միայն ուղղութիւն մը տուաւ իրեն, այլև ազդեց հայոց քաղաքական կեանքին վրայ:

Ինչպէս հեղինակը կ'ըսէ, այս գիրքով ան աշխատած է պատասխանել հետեւեալ հարցումներուն. ինչպէ՞ս, ե՞րբ եւ ինչո՞ւ Հայ եկեղեցին բացայայտօրէն եւ պաշտօնապէս առաջին անգամ մերժեց Քաղկեդոնի ժողովը:

Գիրքը ուսումնասիրած է Քաղկեդոնի ժողովին անմիջական շրջագիծը.

պատմական եւ աստուածաբանական այն գրականութիւնը, որ կանխած է Հայ եկեղեցւոյ մերժումը: Գրքին գլխաւոր բաժինը քննականօրէն տուած է մերժումին պատմական եւ վարդապետական ենթահողը:

Ըստ իրեն, Հայ եկեղեցին մերժեց զայն ընդունիլ հետեւեալ պատճառներով:

ա.- Կրօնական եւ աստուածաբանական, եւ ոչ՝ քաղաքական.

բ.- Ընդհանուր եկեղեցւոյ մէջ քրիստոսաբանական պայքար մը կանխած էր եւ զարգացած կեցուածք մը, որ դժուար համարկելի էր ժողովին եզրակացութիւններուն.

գ.- Նաստորականութիւնը անոր մէջ գտաւ իր թէզին արդարացումը.

դ.- Անհկա ներդաշնակ չէր մինչ այդ Հայ եկեղեցւոյ մէջ զարգացած վարդապետական աւանդութեան:

Գիրքը կը կնքուի վերջաբանով մը, որ յատուկ կարեւորութիւն ունի միջեկեղեցական ժամանակակից յարաբերութիւններուն ապագային համար:

Ահաւասիկ անոր համառօտումը:

506/8-ին Դուիւնի ժողովով Հայ եկեղեցւոյ որդեգրած կեցուածքը Քաղկեդոնի ժողովին դէմ, եղաւ առաջին քայլը՝ որ Հայ եկեղեցին դրաւ շարունակական եւ անխոնջ պայքարի մէջ վարդապետական վէճերու, եկեղեցական լարուածութիւններու եւ քաղաքական շատ դժուար եւ բարդ որոգայթներու:

Հայ եկեղեցին բազմաթիւ այլ ժողովներ գումարեց եւ իր կեցուածքը Քաղկեդոնի ժողովին դէմ արտայայտեց: Վարդապետական ամբողջ աւանդութիւն մը կայ, որ դեռ իր խոր ու համապարփակ ուսումնասիրութիւնը կը սպասէ:

Հեղինակը կատարած է սա հաստատումը, թէ յետ-Քաղկեդոնեան դարերը յստակօրէն ցոյց տուին, որ ուղղափառութիւնը, իբր եկեղեցւոյ կեանքով վկայուած կենդանի հաւատք, պահպանուեցաւ հաւասարապէս թէ Քաղկեդոնական եւ թէ ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներուն մէջ: Հետեւաբար նոր ուսումնասիրութիւններ եւ խորաքննիչ մօտեցումներ Արեւելեան բաժանեալ եկեղեցիները պիտի ազատեն ինքնապաշտպանութեան եւ ինքնարդարացումի ճգնումէ եւ մեթոտէ, եւ մեծապէս պիտի օգնեն անոնց միութեան վերազիւտին:

Ե.- The Witness Of The Oriental Orthodox Churches, Անթիլիաս, 1968: Բ.

հրատարակութիւն՝ 1970: Գ. հրատարակութիւն՝ Անթիլիաս, 1995:

Գիրքը կը սկսի Շարլ Մէլիքի նախաբանով, որուն եզրափակիչ միտքը կ'արձանագրեմ այստեղ. «Վախճանը մարդուն կամ այս կամ այն մշակոյթին կամ այս կամ այն քրիստոնեայ համայնքին փառքը չէ: Վախճանը մեր՝ մեղաւորներուս կողմէ Յիսուս Քրիստոսի փառաբանումն է, քան մարդոց: Վախճանը այն է, ինչպէս Քրիստոս ինք աղօթեց, որ բոլոր անոնք՝ որոնք իրեն կը հաւատան՝ մի ըլլան, եւ ի վերջոյ աշխարհը – այս անկեալ, թշուառ, պայքարող, խաբխափող, հոսանքներէն տատանող, գոռոզ, քայքայուող աշ-

խարհը – հաւատայ, որ Հայրն Աստուած զինք (զՔրիստոս – ԳՔ) ղրկեց»:

Նախաբանին կը հետեւի Գարեգին Սարգիսեան եպիսկոպոսի յառաջաբանը, որ կը սկսի սա հաստատումով. «Միջ-եկեղեցական շարժման ներկայ վիճակը եւ կացութիւնը վճռորոշ նշանակութիւն ունին աշխարհի եկեղեցիներու ամբողջ կեանքին եւ գործին համար, առանց Արեւելքի եւ Արեւմուտքի, Հինի եւ Նորի, Կաթողիկի, Օրթոտոքսի եւ Բողոքականի միջեւ խորութեան»:

Գրքոյկը համառօտ անդրադարձ մըն է եկեղեցիներու այն ընտանիքին, որ ճանչցուած է իր մերժումովը Քաղկեդոնի ժողովին, եւ միջ-եկեղեցական շրջանակին մէջ ծանօթ է Oriental Orthodox Churches անունով, գատորոշուելու համար Eastern Orthodox Churches անունով ընտանիքէն, որուն անդամները հիմնականօրէն ունին վարդապետութեան, ծէսի, կարգի եւ հոգեկանութեան յունա-բիւզանդական աւանդութիւնը:

Յառաջաբանին կը յաջորդեն երկու մասեր: Առաջինին անունն է՝ The Witness of Oriental Orthodox Churches, իսկ երկրորդին անունն է՝ The Old and the New in our Churches: Գրկոյկի աւարտին կայ յաւելուած մը, որ կը բովանդակէ Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու հովուապետներու Ատտիս Ապապայի մէջ 1965 Յունուարին գումարուած ժողովին վճիռները եւ որոշումները, եւ 1967-ին Անթիլիասի մէջ գումարուած Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու ներկայացուցիչներու հաստատումը՝ Քրիստոնէական դաստիարակութեան մասին Միջ-եկեղեցական վկայութեան:

Գրքոյկի առաջին մասին մէջ Գարեգին Սրբազան մէկ առ մէկ գրած է Ասորի Ուղղափառ, Ղպտի Ուղղափառ, Եթովպեան Ուղղափառ եւ Հայ եկեղեցիներուն մասին: Ապա ցոյց տուած, թէ այս եկեղեցիները երկար ժամանակ իրենց միութիւնը զգացած են իբր արդէն իսկ տուեալ իրականութիւն մը, իրենց ծիսական գրութիւններուն եւ իրենց աստուածաբանական կեցուածքին մէջ՝ ընդգէմ Քաղկեդոնի ժողովին եւ Լեւոնի Տոմարին: Միութեան ուժական հասկացողութիւն մը անհրաժեշտ է ներկայիս:

Եկեղեցին թէ արեւելքի եւ թէ արեւմուտքի մէջ պէտք է ներկայ ըլլայ դաստիարակութեան, ընտանիքի, ճարտարագիտութեան, գիտութեան, ընկերային ծառայութեան, քաղաքականութեան, մշակոյթի եւ մարդկային կեանքին ազդող բոլոր կալուածներուն մէջ իբր փոխակերպող ուժ մը եւ ոչ թէ իբր հաստատութիւն մը:

Գրքոյկի երկրորդ մասին մէջ Գարեգին Սրբազան գրած է ակնարկելով ոչ-քաղկեդոնական այս եկեղեցիներուն մասին, թէ աւանդութեան եկեղեցիներ են, կասկածոտ եւ դժկամակ զիմակալելու արդի կեանքի փոփոխութիւնները: Հասարակաց զօրաւոր զգացումը այն է, որ եկեղեցիներուն միութիւնը եւ համերաշխութիւնը պահողը՝ դարաւոր աւանդութիւնն է: Սակայն քրիստոնէութիւնը՝ յայտնեալ ճշմարտութիւնը՝ պատմութեան ընթացքին մարդ արարածին հետ իր հանդիպման ոլորտին մէջ աճած է: Վերանորոգումը անոր պատմական իրականութեան բաղկացուցիչ մաս մը եղած է: Ոչ-Քաղկեդոնական եկեղեցիները պէտք է պահպանէին իրենց վստահուած աւանդութիւնը:

Բայց պէտք է խոստովանիլ նաեւ, որ այդ պահանջները ալլազան ճնշումներու տակ՝ որոշ ժամանակներու մէջ փոխուած է զօրաւոր աւանդապաշտութեան: Աւանդապաշտութիւնը, սակայն, չէ հասած կէտի մը, ուր հաւատքին նորութիւնը կորսուէր եւ վերանորոգութեան ոգին մթազնէր: Այլապէս եկեղեցիները պիտի մեռնէին:

Հինը նորի փոխելու համար անհրաժեշտ է տեւաբար վերանորոգուիլ Աստուծոյ մէջ եւ՝ անոր ծառայութեան:

Չ.- The Armenian Church In Contemporary Times, New York, 1970:

Նախաբան մը գրուած Ամերիկայի Կիլիկեան Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Հրանդ Արք. Խաչատուրեանի կողմէ, որ յօդուածը կարեւոր համարած է բոլոր անոնց համար, որոնք կը մաքառին ազգային կառոյցներու զարգացման համար, որպէսզի կարենան պահպանել եւ հարստացնել ազգային ինքնութիւնը:

Ուսումնասիրութիւնը նախ կու տայ քաղաքական կացութիւնը, ապա կը խօսի հայոց կրօնական եւ մշակութային զարթօնքին մասին: Աւարտին կը խօսուի Հայ եկեղեցւոյ հարցերուն եւ հեռանկարներուն շուրջ:

Այստեղ կ'ընդհանրուի արձանագրել ուսումնասիրութեան վերջին բաժնին հիմնական միտքը:

Հայ ժողովուրդը բարդ կացութեան մը մէջ կը գտնուի: Անոր հողերուն մէկ մասը ենթակայ է Սովետական իշխանութեան, իսկ միւսը գրաւուած է թուրքերուն կողմէ: Հայ եկեղեցին այս կացութեան մէջ իր հոգեւոր առաքելութեան կողքին ունի նաեւ ազգային առաքելութիւն մը, որ կու գայ իր պատմական գոյութենէն եւ իր աւանդութենէն: Սակայն Հայ եկեղեցւոյ յանձնառութիւնը ազգային կեանքին մէջ պատճառ կ'ըլլայ անոր քաշուելուն ներքին զանազան դժուար խնդիրներու մէջ:

Օրինակ շատ դժուար խնդիր մըն է երկու կաթողիկոսութեանց՝ էջմիածնի եւ Կիլիկիոյ պայքարը: Լուծում մը այն պայքարին կարելի է միայն՝ մէկ կողմէ եթէ էջմիածինը բարեփոխէ բացարձակ հեղինակութեան իր կեցուածքը եւ որդեգրէ աւելի մեղմ, ճկուն եւ հասկնալի կեցուածք մը, որ ընդունի Կիլիկեան Աթոռին անկախ կարգավիճակը, իսկ միւս կողմէ Կիլիկեան Աթոռը յարգէ Մայր Աթոռին նախամեծարութիւնը «կոնկրետ կերպով մը»: Հակառակամարտութեան տեղ պէտք է գրաւէ փոխադարձ հասկացողութիւնը եւ համագործակցութիւնը: Եթէ այս ներդաշնակութիւնը ձեռք չձգուի, Հայ եկեղեցին չի կրնար իր հոգեւոր եւ ազգային առաքելութիւնը յաջողապէս կատարել:

Է.- Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան, Անթիլիաս, 1979: Բ.

հրատարակութիւն՝ Ս. Էջմիածին, 1996:

Այս գործը նաեւ ներառուած է «Աստուածաբանութիւն» հատորին մէջ, որուն պիտի անդրադառնամ:

Գիրքը կը բացուի ներածութեամբ մը, որով հեղինակը կը սահմանէ

աստուածաբանութիւնը եւ կ'որոշէ Հովուական Աստուածաբանութեան տեղը այն կալուածին մէջ:

Ի՞նչ է աստուածաբանութիւնը, եւ ինչո՞ւ համար է:

Ըստ Գարեգին կաթողիկոսի, անիկա «մարդկային մտքին ճգտումն է Յայտնութեան լոյսով եւ հաւատքի զգայնութեամբ ու տրամաբանական ճիշտով Աստուծոյ իրականութիւնը, Անոր "ի վեր քան զմիտս եւ չբանս" բնութիւնը իր խորհրդալից գերազանցութեանը մէջ ճանչնալու, Անով հոգեկան լիացում ունենալու եւ երջանկութեան գոյութեանական ծարաւին յագեցման ազբիւրը գտնելու համար»:

Աստուածաբանութիւնը երեք գլխաւոր բաժանումներով գիտութիւն մըն է: Գարեգին կաթողիկոս այն բաժանումները կոչած է՝

- Տեսականք,
- Պատմականք,
- Գործնականք:

Առաջինը այն կալուածն է, որուն նիւթը կը կազմեն քրիստոնէական հաւատքի էական տարրերը, այլ խօսքով՝ եկեղեցւոյ դաւանական սկզբունքները: Տեսականքին նպատակն է «տեսաբանական, իմացական-վերլուծական, պարզաբանական-փաստարկական մեթոտով եւ մարդու միտքին տրամաբանական ընկալչութեան բարձրագոյն ձեւին մէջ ներկայացնել քրիստոնէական հաւատքին ճշմարտութիւնը»:

Երկրորդը այն կալուածն է, որուն «նիւթն է ուսումնասիրութիւնը քրիստոնէական հաւատքի ծագման, մարդկութեան կեանքին մէջ յայտնագործման, այլազան շրջաններուն տարբեր-տարբեր եղանակներով արտայայտութեան, կեանքի տարբեր-տարբեր երեսներու եւ պայմաններու մէջ մարդոց կողմէ իւրացման եւ գործնական զբսեւորման եւ այլն»:

Երրորդը այն կալուածն է, որուն նիւթն է «ուսումնասիրել այն միջոցներն ու մեթոտները, որոնցմով տեսականօրէն ըմբռնուած եւ պատմականօրէն լուսաբանուած քրիստոնէական հաւատքը կրնայ փոխանցուիլ ժողովուրդին եւ ապրուիլ գործնականօրէն, մարդոց երջանկութեան եւ հոգիներու փրկութեան համար»:

Այս խումբին գլխաւոր բաժիններն են՝ Հովուական աստուածաբանութիւնը եւ Բարոյագիտութիւնը:

Արդ, մեր ուշադրութեան առարկայ գիրքը գործնական աստուածաբանութեան կը պատկանի: Ի՞նչ է Հովուական աստուածաբանութիւնը եւ ի՞նչի կը ծառայէ:

Գարեգին կաթողիկոս այսպէս բացատրած է. «Հովուական աստուածաբանութիւնը գիտելիք-ներու, ծանօթութիւն-ներու, անելիք-ներու, թելադրութիւն-ներու, խրատական-ներու գումար մը չէ: Գէթ մենք զայն չենք ըմբռներ որպէս ընդարձակ մանրամասնեալ գիտութիւն մը: Հովուական աստուածաբանութիւնը առիթ կ'ընծայէ հովիւի անձին եւ գործին կարեւոր հարցումներ դնելու, գլխաւոր երեւոյթներ շեշտակիօրէն մատնանշելու, որպէսզի

հովիւը միջոց ունենայ ըստ այնմ մտածելու եւ ջանալու խորագոյն անկեղծութեամբ իր ինքնութեան ու գործին նկարագիրն ու տարողութիւնը մշտական մտասեւեռումի առարկայ դարձնել ինքնիրեն համար»:

Գիրքը ունի ներածական մը, որուն մէջ աստուածաբանութեան սահմանում մը կու տայ, ակնարկ մը կը կատարէ աստուածաբանութեան զարգացման դէպի գիտութիւն, եւ կը ներկայացնէ կալուածին ներքին բաժանումները եւ անոնց սահմանումները կը կատարէ:


Ներածութեան կը յաջորդէ Ա. մասը, որուն նիւթն է հովիւին անձը, հայ հովիւը եւ անոր պատրաստութիւնը: Ապա՝ Բ. մասով կը խօսի հովիւի ընկերային, ծիսական եւ քարոզխօսական գործին շուրջ:

Յաւելուած մը կը հետեւի, ուր դրուած են հովիւի մը համար շահեկան Մայր Մաշտոցէն, Յ. Մանդակունիէ, Ն. Շնորհալիէ, Սահակ Բ. Կաթողիկոսէ, Բաբգէն Վրդ. Կիւլէսէրեանէ եւ Գարեգին Յովսէփեանցէ հատուածներ եւ գրութիւններ:

(Շարունակելի 1)

Գառնիկ Ք. Գ.

«20-րդ Դար/Աստուածաբանութեան Սեմին Համար» (Դեմքեր եւ Գործեր),  
Յուցակագրական անոխպ գործէն



## ՀՆՈՒԹԵԱՆ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

### 1. Նիկիա (325)

Ծագած է Արիոսի հաստատումներէն, ըստ որոնց Քրիստոս «ստեղծուած» է. կը հաստատէ թէ մարդեղացած Բանը Հօր նոյն էութեանէն է (հոմուուսիոս, համադոյակից), Աստուած Աստուծմէ ծնած:

### 2. Կոստանդնուպոլիս (381)

Կը փորձէ վերջ դնել Արիոսի վարդապետութեան, վերահաստատելով Քրիստոսի ինչպէս եւ Սուրբ Հոգիին աստուածութիւնը, որ Եւնոմիոսի կողմէ կասկածի տակ առնուած էր:

### 3. Եփեսոս (431)

Ժողովէն սահմանում չի թուիր հասած ըլլալ: 433ին, «միութեան ակտ» մը կ'ըսէ. «Կը խոստովանինք ուրեմն Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, Աստուծոյ միակ Որդին, կատարեալ Աստուած, եւ կատարեալ մարդ, բաղկացած բանաւոր հոգիէ մը, մարմինէ մը, դարերէն առաջ Հօրմէն ծնած, համաձայն աստուածութեան, վերջին օրերս ծնած Մարիամ Կոյսէն»:

### 4. Քաղկեդոն (451)

Կը հաստատէ «միակ եւ նոյն Որդի մը, մեր Տէրը Յիսուս Քրիստոս, կատարեալ իր աստուածութեամբ, կատարեալ իր մարդկութեամբ, իսկապէս Աստուած, իսկապէս մարդ»:

### 5. Կոստանդնուպոլիս Բ (453)

Կը դատապարտէ Որոգինէսին եւ երեք աստուածաբաններու (Թէոդորոս Մոպսուեստացիի, Թէոտորեոս Կիւրացիի, Իբասի) վերադրուած սխալները: Նաեւ Նեստորականութիւնը:

## Նիկիոյ հաւատամքը

Կը հաւատանք միակ Աստուծոյ մը  
ամենակարող Հօրը,  
արարիչ բոլոր  
տեսանելի եւ անտեսանելի բաներու,  
եւ միակ Տիրոջ Յիսուս Քրիստոսի,  
միածին ծնած Հօրմէն,  
այսինքն Հօր էութենէն,  
Աստուած ծնած Աստուծմէ,  
Լոյս ծնած Լոյսէն,  
ճշմարիտ Աստուած ծնած ճշմարիտ Աստուծմէն:

Ծնած, ոչ թէ ստեղծուած,  
համագոյակից Հօր,  
որով ամէն ինչ եղաւ  
երկինքի մէջ եւ երկրի վրայ:  
Մեզի՝ մարդոցս համար  
եւ մեր փրկութեան համար,  
ան իջաւ,  
մարմնացաւ եւ մարդացաւ:  
Ան կրեց իր չարչարանքը,  
յարութիւն առաւ երրորդ օրը,  
ելաւ երկինք  
ուրիշ պիտի վերադառնայ դատելու կենդանիները եւ մեռելները:  
Եւ Սուրբ Հոգիին:

Գալով անոնց, որ կ'ըսեն.  
Ժամանակ մը կար  
ուր ան չէր, կամ,  
ան չէր  
ծնելէ առաջ,  
կամ ոչինչէն ելաւ ան  
կամ թէ Աստուծոյ Որդին  
ուրիշ գոյութենէ մը կամ էութենէ մըն է,  
կամ թէ ան ստեղծուած է  
կամ թէ հաստատուն չէ  
այլ փոփոխութեան ենթակայ,  
Եկեղեցին զանոնք կը նզովէ:

Թամար Տասնապետեան

## ՔԵՉ ՏԵԱՌՆԴ ՅԱՆՉՆ ԵՂԻՑՈՒՔ

Երբ գիշերն էր վրայ հասնում,  
Եւ խաւարի տարածութեան  
Ալեծփուն մատոյցներում  
Քամիների խնջոյքի հետ  
Խորհրդաւոր լոյսի շիթեր  
Հագիւ փայլած՝ խամրում էին  
Երախների մէջ դիւթական,  
Նայում էի ես երկնքին  
Եւ ձեռքերով աղաչական  
Սիրտըս իբրեւ ընծայ բռնած,  
Ասում էի զգոնապէս,  
— Քե՛զ՝ Տիրոջդ յանձնում եմք մեզ :

Նոյնիսկ այսօր, երբ մեր գիւղում  
Լապտերները էլեկտրական  
Փորձ են անում խաբեպատիր  
Հմայքներով տարագրելու  
Սեւ խաւարը գիշերային,  
Այդուհանդերձ մթնոլորտում  
Չեն դադարում կուտակումներ  
Չար դեւերի պիղծ գունդերի,  
Որ փորձում են առեւանգել  
Հոգիներն այն շուայտացած  
Եսակենտրոն տենչանքներով,  
Իսկ ես դարձեալ հեզահնչիւն,  
Սիրտըս իբրեւ ընծայ բռնած,  
Շարունակում եմ միշտ կրկնել .  
— Քե՛զ՝ Տիրոջդ յանձնում եմք մեզ :

Բայց յետնագոյն այս ժամերին,  
Կեանքի ծովում նաւարկութեան  
Հանգրրուանին այս վերջնական,  
Մրրիկները խռովայոյզ  
Հարուածում են ամէն կողմից  
Խլեակ դարձած իմ նաւակին :  
Ուժըս տակաւ լքում է ինձ,  
Թէեւ յոյսըս չեմ կորցրել,  
Բայց մարմինս սկար է յոյժ :  
— Տէ՛ր, — ասում եմ ես անձկանօք, —  
Այս ամէնը դու տեսնում ես  
Եւ լաւ գիտես մեր մարդկային  
Սահմանները կարողութեան,  
Ինձպէսներին դու չես լքի,  
Զի մեմք վաղուց ամբողջապէս  
Մեզ լիայոյս յանձնել եմք քեզ :

Հեռուից Տէրը նայում է ինձ  
Եւ բազուկները տարածած՝  
Անհուն սիրով անյիշաչար  
Սպասում է իմ տուն դարձիս...

## ԳԱՆՁԵՐ ՉՈՒՆԵՄ

Գանձեր չունեմ բազմակուտակ,  
Ոչ էլ վաստակ պատկառելի,  
Որ մշտաշող արեւի տակ  
Ինձ էլ լսող մէկը լինի:

Բայց դո՛ւ, Տէ՛ր իմ, մեզ նման չես,  
Որ տաս արժէք մեր ունեցած  
Տիրողոսներին վսեմատես  
Կամ արծաթին լաւ ծրարուած:

Դու չես նայում ունեցածին,  
Այլ՝ մարդկային մեր էութեան,  
Բազմածփուն մեր յոյգերին,  
Տենչանքներին անանձնական:

Դրա համար տէ՛ր բարերար,  
Թող որ լինեմ սիրով լցուած,  
Որ մօտենամ կարեկցարար  
Հոգիներին սիրուց գրկուած:

Լինեմ անկեղծ իմ անձի հետ,  
Եւ սրտերից նենգ ու պատիր  
Թող որ մնամ հեռու յաւէտ,  
Ովկիանի չափ անծայրածիր:

Յայնժամ Տէ՛ր իմ դու կը տեսնես  
Նշոյլը քո սուրբ պատկերի  
Ծալֆերի մէջ հոգուս անտես,  
Իբրեւ աղբիւր կենաց ջրի:

Գանձեր չունեմ ես թանկագին,  
Բայց քեզ համար ամէն տեսակ  
Գանձերից վեր է սիրտս ինքնին,  
Երբ դարձել է քեզ հպատակ:

## ԻՄ ԿՈՂՔԻՆ ԵՍ

Ես մենակ չեմ իմ սենեակում:  
Ամէն անգամ քեզ յիշելիս՝  
Գալիս ես դու դուռս բակում  
Եւ փարատում ցաւը սրտիս:

Երբ յոգնատանջ աշխատանքում  
Ուժս տակաւ լինում է ինձ,  
Քեզ՝ լինածիդ եմ ես յիշում,  
Եւ դու գալիս ժպտում ես ինձ:

Ուժ ես տալիս դու ինձ նորից,  
Որ վաստակս լինի արդար,  
Որ չմուրամ ես ոչ ոքից  
Մի կտոր հաց անարգաբար:

Սիրտս տխուր եւ ընկնուած  
Հոգսերի տակ լուռ ցաւատանջ,  
Հազիւ դիմած քեզ Տէ՛ր Աստուած,  
Յոյսն է ժպտում զարմանաւանջ:

Իցի՛ն թէ քեզ յիշեմ նաեւ  
Երախտապարտ զգացումով,  
Ե՛րբ պահերս եմ անցնում թեթեւ  
Վայելքների մէջ անվրդով:

Գուցէ, Տէ՛ր իմ, այդ բոպէին,  
Մահը հասնի արագավազ,  
Բայց երբ լինես դու իմ կողքին՝  
Դուրս կը փախչի նա հալածուած:

Ու ես կ'ընկնեմ թեւերիդ մէջ  
Իբրեւ մանուկ գորովատենջ  
Եւ կը գտնեմ այնտեղ անվերջ  
Ջերմութիւնը սիրոյ անշէջ:

ՅԱԿՈՒ ԱՌՔ. ԳԼՆՃԵԱՆ